


Leach - Grayish

Worm-eaten soil

891.99

C-23

1912



19 NOV 2017

ՅԱՅ-ՊԱՐՈՆ

Am. 882

ԱՐՅՈՒՆՔԻ ԾՈՎ

ԳՐԱԿԱ

ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱԿԲ

Տպարան «ԾԻՐԱԿ» Ալեքսանդրապոլ

1912

891.99

G-23

Արմ.

2-6081a

ՇԱՀ-ՊԱՐՈՆ

897.99

Ն-23

Am. 882

2-6081a

904

ԱՐՑՈՒՆՔԻ ԾՈՎ

ԴՐԱՄԱ

ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



Տպարան «ՇԻՐԱԿ» Ալեքսանդրապոլ

1912

ԳԻՑ. № 22474

2 JUL 2013

47098

47A

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Յ Ա Ռ Ա Զ Ա Յ Ա Ն

Այս երկը քննադատողները կարող են ստել, թէ միայն արիւն, արցունք, որոտ, մահ... ուրիշ ոչինչ. իսկ ես կասեմ, այո՛, եթէ բարեկեցիկ ազգութիւնների կեանքից լինէր այս քստմեցնող դրաման, շատ ուղիղ կլինէր մեր պ. պ. քննադատների կարծիքը, բայց ավանդ, սա մեր թիւրքահայ դժբախտ ժողովրդի կեանքից է, սա դեռ հեռավոր, շատ հեռավոր պատկերն է, ինչ որ կատարվել է այդ արիւնլվայ երկրում... Մի՞թէ Սասնոյ լեռների նփոցը չէինք լսում, մի՞թէ թնդանօթների որոտը, հրացանների ճարձատուներ, որոնք մահ էին սփռում խեղճ, թշվառ, անպաշտպան ժողովրդի վերայ, չէին հասնում մեր ախանջին, մի՞թէ մենք լսում էինք բարեկեցիկ մարդկանց աննոզ ծիծաղը, մի՞թէ թիւրքահայ օրիորդի երեսին խաղում է նազիկ ժպիտը... Ո՛չ, ո՛չ, արիւն էր հասում, արցունքի հեղեղներ էին վազում, լացի, ողբի, աղէխարշ վանքերի, օգնութեան կանչի զարնուրելի համերգի ձայնն էր լս-



39489-63

վում, և միթէ այս բոլորից յետոյ գրիչը կարող է արտադրել անդորր կեանքի դիւրալի պատկերներ... Ո՛չ, մուսլ էր մեր կեանքը, մուսլ էր մեր հոգին, մուսլ կլինեն և հոգու արտադրութիւնները...

Թող ներող լինեն կարգացողները կամ հանդիսատեսները, որ չեմ խնայել նրանց ջգերը. ի՛նչ արած, մեր թիւրքահայ անտանելի կեանքը այդ է: Ես էլ եմ լացել, երբ գրչիս տակ ճշում էր խելակորոյս մայրը, հեկեկում էր այս երկի հերոս Հրայրը... Հրայրը, որը թէև առիւծ, բայց անգոր էր թշվառը պաշտպանելու, չարիքի առաջնառնելու... Այո՛, սա փունջ է մահի, արցունքի, արիւնի. սա համերգ է ողբի, հեկեկանքի, հեծկտանքի. սա պատկեր է դժոխքի... Մեր կեանքը այդ է, այդ կարող ենք արտադրել...

Հեղինակ

20-ն յուլիսի 1904 թիւ

Ժիզդոս

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ի Ն Ք

ՀՐԱՅՐ. Խմբագրեա. 30 տարեկան խրոխտ, վառվառն երիտասարդ:

ՄՔԷ. 25—30 տարեկան, մեղամազձոտ, չըրայրի ընկերը:

ՍՐՔԷ. 23—25 տարեկան, գէմքի սուր գծերով, մուսլ, Հրայրի եղբայրը:

ԳՐԳՕ. 23—25 տարեկան խրոխտ, Հրայրի ընկերը:

ՄԱՐՁԱՆ. 55—60 տարեկան պառաւ կին, Հրայրի մայրը:

ՉԱՐԳԱՐ. 40—45 տարեկան, Գրգօի մայրը:

ԳԻԻԼԻՉԱՐ. 17—18 տարեկան գեղեցկուհի, Գրգօի նշանածը:

ՍԼՕ. 25—30 տարեկան համիդէական քիւրդ սղայ, վայրենի գծերով:

ՄԻՆԱՍ ՔԷՀԱՅ. 40—50 տարեկան գիւղացի, Գրգօի կնքահայրը:

ՄԱԹՈՍ. 20—22 տարեկան վառվառն պատանի, Հրայրի խմբից:

Լ և ԼԼ ԲԱՆՎՈՐ. Քանդավաճ գիւղի գիւղացիներից:

ԲԱՀԱՆԱՅ. 60 տարեկան առոյգ ծերունի, քանդավաճ գիւղի նովիւր:

ՍՊԱՅ. Թիւրքական օֆիցեր:

Հրայրի միտ ընկերները, քանզված գիւղի
ընակիչները, որոնցից են ըմբիշները, սուրճ բե-
րողը և այլն:

Ծերունի գիւղացին, նրա հարսն ու թոռնե-
րը, քիւրդ համիդէականներ և թիւրք զինւորներ:

Հրայրը և ընկերները զինված են ոտից
ցզուխ, հագած են Սասունցու շորեր: Քիւրդ հա-
միդէականները և թիւրք զինւորները պաշտօնա-
կան շորերով են և զինված:

Գիւղացիք և կանայք հագած են Մշեցու շո-
րեր և անզէն են:

Անցքը կատարվում է Մշոյ դաշտում և
Սասունում:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Տեսարանը ներկայացնում է բարձրաբերձ ժայ-
ռոտ բերձերով լեռներ. բեմի դէմ ու դէմ, լեռ-
ների մէջ բացվում է մի անարկու ժայռոտ խոր
ձոր, որի խորքում, յարձրից, լեռան զագաթից
թավալում է գէպի անդունդը փրփրոտ վտակը
և կորչում գէպի ձախ, խաղ անելով քարերի հետ:
Բեմը նօսք ծառերով ծաղկավէտ պարտէզ է, քա-
րեայ ցածր պատերով: Բեմի ձախ կողմը, խոր-
քում երևում են մի քանի գիւղական տնակներ,
որոնց շարքերը կորչում են բեմի յետևում):

Տ և ս ի լ 1.

ՀՐԱՅՐ, ՄՔԷ, ՄԱԹՈՍ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐ

(Որը թէք ընկած ժայռերի բեկորների վե-
րայ, որն էլ գէնքերն է մաքրում):

ՀՐԱՅՐ. է, թողէք Աստված սիրէք,
մենք յոյսերս պէտք է կտրենք մարդասի-
րութիւնից, գրանք կեղծ խօսքեր են, ուրիշ
ոչինչ, մեր յոյսը այ (քարձրացնում է հրա-
ցանը) այս է, (շոյելով փամփուռաները),
խիկ սրանք պէտք է լինեն մեր ատամները,
որպէսզի բզկատենք, պատառտենք, ոչնչա-
ցնենք այն, որը մեզ տանջում է, որը իր-

րև վամբիր ծծում է մեր արիւնը:

ՄՔԷ. Լաւ ես ասում Հրայր, բայց...

ՀՐԱՅՐ. Բայց... թոյլ ենք, հա...

ՄՔԷ. Այո:

ՀՐԱՅՐ. Ես չեմ հասկանում ինչ է նշանակում թոյլ. քանի կեանքը քո մէջ եռում է, քանի արիւնդ երակներիդ մէջ խաղում է, մի ասիր թոյլ եմ... Դէմդ ով ուղում է թող լինի, եթէ մինչև անգամ հարիւր դըլ-խանի վիշապ, իբրև մրրիկ յարձակվիր, փարվիր, խփիր, շանթիր... կամ ազատ ազրէ, կամ ոչնչացիր... Թէ չէ իբրև որդունք սողսլ, աղաչել, խնդրել, որպէսզի ապրել... Ավելի լաւ է մեռնել, որովհետև գերեզմանը ավելի հանգիստ կլինի... կամ ազատ ապրել, կամ ազատ պառկել գերեզմանում. անա իմ նշանաբանը:

ՄՔԷ. Ճիշտ է, շատ ճիշտ, բայց հանգամանքները այնպէս են բարդված, որ մենք ստիպված պիտի ենթարկվենք այդ դրութեան:

ՀՐԱՅՐ. Ինչո՞ւ:

ՄՔԷ. Ինչո՞ւ. նրա համար, որ բացի մեզ պէս տղամարդկանցից, կան և հազարավոր կանայք, երեխաներ, ծերունիներ,

հիւանդներ, հաշմեր, թոյլեր... Ի՞նչ ասենք այն մայրերին, որոնք իրենց մորթված որդիերանց պիտ փնտրեն. ի՞նչ ասենք այն որբերին, որոնք ներկված իրենց հօր արիւնով, հօթի պիտ մղկտան...

ՀՐԱՅՐ. Ինչ ասենք. միթէ նրանք արդէն մեռած չեն, միթէ ամեն օր հատ-հատ չեն մորթվում հայ որդիք, միթէ ամեն օր չեն լայ հայ մայրեր... Միթէ չենք լսում հօթի հայ որբի մղկտոցը... Օ, մենք մեզ խաբում ենք. ժահրոտ, շատ ժահրոտ է մեր այդ դարերը վերքը. դարեր շարունակ կաթ կաթ քամվել է մեր արիւնը, դարեր շարունակ այդ զազիր ժահրը փթեցրել է մեր ոսկոտները և մենք վախենալով, թէ այդ վերքը կտրելով արիւնաքամ կլինենք, համբերել ենք... Խփիր, կտրիր, դէն զցիր այդ պալաղը. կամ բոլորովին արիւնաքամ կը մեռնենք փոռաւոր մահով, կամ թէ չէ ազատվելով դարերը փթեցնող վերքից, կապրենք նոր կեանքով: Է, դատարկ բան է բոլորը, դատարկ: (Խփելով Մքէի ուսին). Լաւ, թողնենք դրանք, դու այն ասա, երեկ ի՞նչպէս էր թրփրտում արիւնախում Իւսուֆ բէկը:

ՄԳԷ. (Ժպտալով). Այն, շատ սիրուն տեսարան էր. անի, ինչ լաւ կը լինի, եթէ բոլոր վառ մարզիկ այգպէս թրփրաային:

ՀՐԱՅՐ. Նրանց լաւ դաս էր այդ, էլ միւս անգամ չեն համարձակվի մօտենալ մեր լեռներին:

ՄԱԹՈՍ. Նրանք խրոխտալով պարծենցել են, թէ գնում են Հրայրի գլուխը բերելու:

ՀՐԱՅՐ. Հրայրի գլուխը... Օ, շատ դժվար է. Հրայրը մի գլուխ չունէ, սա որ երևում է, պաշտօնական Հրայրի գլուխն է, եթէ սա ընկաւ, սրա յետեր կանգնած են հարիւրաւոր առիւծ Հրայրներ: Տղերք, ուղիղ ասած կեանքը ինձ համար գոռոջ է, գոռոջ...

ՄԳԷ. Իսկ մեզ համար քո կեանքը թանկագին է. եթէ Հրայրը ընկնի, բա ո՞վ պէտք է Սասնոյ լեռները զզրդացնէ իր մոնչոցով, ո՞վ իբր կայծակ պիտի շանթէ գող ալագակին, ո՞վ սրբէ արցունքը խեղճ թշւառին... Տասը տարի է, որ այդ ծանր բեռը կրում ես ուսերիդ վերայ, այժմս էլ ապրէ, երկար ապրէ, սրովհետեւ քո անունը միայն ահ ու սարսափ է մեր թշնամեաց համար:

ՀՐԱՅՐ. Լաւ, հերիք է ՄԳԷ, դրանց ժամանակը չէ. Մաթոս, (մօտինում է Մաթոսը). գնա մեր տունը, ասա մօրս և եղբօրս Սրբէին, որ ես իմ ընկերներով հիւր եմ եկել իրենց մօտ և իջհանել եմ այգոււմ: Դէ, գնա, (ցոյց ապլով), այ մեր տունը, դիմադէմ:

ՄԱԹՈՍ. Գիտեմ, մի անգամ եղել եմ: (Գնում է):

ՄԳԷ. Մայրդ ու Սրբէն հիմայ կգան, ինչպէս կուրախանան, ինչպէս կգարմանան. երկու երեք տարի է, չեն տեսել, յանկարծ իրենց այգոււմն է բուսել առիւծ Հրայրը: Էհ, երանի քեզ Հրայր, մեր տունը շատ հեռու է, շատ: Ո՞ւր Սամսար, ո՞ւր Սասնոյ լեռներ:

ՀՐԱՅՐ. Ասոված կտայ մի օր էլ դու կարժանանաս ձերոնց տեսութեան:

ՄԳԷ. Չէ, Սասնոյ լեռները մինչև վերջին շունչս թողնելու չեմ. քոնը ուրիշ. անա Մշոյ գաշար, (ցոյց տալով հեռու լեռները) անա Սասուն. իսկ Սամսար, միենոյն է թէ ինձ համար աշխարհի միւս ծայր...

ՀՐԱՅՐ. Լաւ, լավ ՄԳԷ, գործիդ նայէ,

ամեն բան կլինի, մի օր այսպէս, մի օր այնպէս, կեանքը կգլորվի, կընկնի մութ փոսը և այն ժամանակ միևնոյն է, էլ չկայ զգացմունք, չկայ զգայարանք, սէր, զըզվանք, կարօտ, այլ կայ միայն յավիտենական հանգիստ: Իսկ այժմ քանի ապրում ենք, դեռ տենչանք, յուզվենք, շարժարվենք, տանջվենք, բայց չընկճվենք... Նամուս, միայն նամուս. շարդ ու փշուր լինենք, բայց գլուխ չծռենք... Արեան մէջ խեղդվենք, բայց էլի գլուխներս վեր բռնենք, վեր, բարձր, բարձր, քան էն Սասնոյ սարեր:

ՄԻՔԷ. Հրայր, ինչ ուզում է լինի, բայց արեան մէջ լողալը լաւ չէ:

ՀՐԱՅՐ. Երևի ինձ չես ճանաչում Մքէ, մի նայիր այս խոժոռ դէմքիս, այս կոշտ կրծքիս, բոի ձեռքերիս. բաց սիրտս, տես շատ փափուկ է, շատ փուխր, կանացի, բայց միայն թոյլի, թշվառի, խեղճի, ճընշվածի համար, իսկ վայ ճնշողին, կեղեքողին, նրանց համար քար է, քար. այդպիսիների համար իմ սիրտը դժոխք է և ես դժոխք եմ ամբողջ էութեամբ... այ, իմ մէջ մտցրել են այդ հակումները դժոխային

կեանքի անտանելի պայմանները... Ասա, Մքէ, ես մեղավոր եմ, որ արիւնարբու եմ, մեղավոր եմ, որ իբր մըրիկ քանդում, թաւանում, ավերում եմ այն ամենը, ինչ որ թշնամունն է:

ՄԻՔԷ. Իհարկէ ոչ, այդ թշնամին ինքն է սովորեցրել մեզ, դա դեռ մի հարիւրերորդական հատուցումն է, որովհետև մենք խնայում ենք խաղաղ, խեղճ, թիւրք, քիւրդ բնակչութեան, իսկ նրանք անխնայ են դէպի մեզ, նրանց ձեռքը մինչև անգամ չի գողում, երբ մորթում են հայ մանկախն. իրավունք ունիս Հրայր, բայց իհարկէ, էլի պէտք է խուսափենք արիւնից:

ՀՐԱՅՐ. Արիւնից խուսափենք... շատ գեղեցիկ խօսքեր, բայց կեանքը այդ չգիտէ... Միթէ պիտի խնայէի զազան Մուսա բէկին, ճիւտոյ Նաթօ աղային: Օ, այն ժամանակ իմ սիրտը այնպէս էր ալեկոծվել վրէժխնդրութեամբ, որ պատրաստ էի մինչև անգամ նրանց արիւնը խմել: Բայց և այնպէս դարձեալ ես էի, երբ մի ուրիշ տեղ մի ամբողջ թիւրք գիւղ ազատեցի արիւնախում քիւրդերի թալանից ու կոտորածից... Պէտք է տեսնէիր թէ ինչ-

պէս էին լիզում իմ ձեռները թիւրք մայրերը, պէտք է տեսնէիր, թէ ինչպէս արցունքը աչքերին թիւրք ծերունիները Աստվածանից աղաչում էին, որ իմ սուրը կրտուռուկ անէ: Այն ժամանակ ես հեզ գառն էի, իմ կարծր կուրծքս այէկոծված էր, աչքերս ցողված էին արցունքով, գուրգուրում էի թիւրք երեխաներին, սիրա էի տալիս վիրավորներին, ինչո՞ւ այդ այդպէս էր: Դէ, քիւրզը կոտորում է թիւրքին, ավելի լաւ, մեզ տանջողը կեղեքում է մեզ ճնշողին, բայց ո՞չ, այնտեղ թշվառներն էին, այնտեղ անպաշտպան երեխաներ, թոյլ կանայք, խաղաղ, անզէն ժողովուրդն էր կեղեքվում, իսկ Հրայրի սուրը դրանց համար է, նա չի ճանաչում ազգ, նա ճանաչում է մարդ, թշվառ, կեղեքված, ընկած, տրորված և պատրաստ է միշտ իր ձեռքը մեկներու այդպիսիներին: (Ձեռքով խտնելով Մքէի ուսին). Է, Մքէ, արիւնս նորից ետեկաւ, ձեռքերս ինչ որ անհանգիստ են, կոխւ, կոխւ է պահանջում կեանքը, փառավոր բան:

ՄՔէ. Բայց այսօր իմ ստամոքսը ուտել է պահանջում, ամբողջ մի օր է, որ

ոչինչ չենք կերել:

ՀՐԱՅՐ. Ուղիղ որ բոլորովին մոռացել եմ անօթութիւնս. հավատացնեմ քեզ, խառն օրերը, այսինքն երբ կիրճերում դարան մրտած քիւրզ հրոսակների ենք սպասել, կամ դիրք մտած թիւրք զօրքերին ենք դիմադրել, եղել է դէպք, որ մի օր, երկու օր հաց չենք կերել, բայց և այնպէս ուտելու պահանջ չենք զգացել:

ՄՔէ. Ճիշտ է, մեզ կշտացնում են մեր փառավոր յաղթութիւնները, սխրագովծութիւնները. մենք ապրում ենք ոչ թէ նիւթահան, այլ վերացահան անուրջների աշխարհում: (Ներսէն մտնում Մարջանը, Սրբէն, Մաթոսը. Սրբէի ճեղքում մեծ կապոցով ուտելիքներ կայ, որը դնում է գետին):

Տ Ե Ս Ի Դ 2.

ՆՈՅՆՔ, ՄԱՐՁԱՆ ԵՒ ՄՐՔԷ

• ՀՐԱՅՐ. (Փարվելով մօքք եւ կարծտով համբուրելով ձեռները, իսկ մ'այրը այտերը, ճակատը եւ այլն): Մայրիկ, մերի:

ՄԱՐՁԱՆ. Մերիդ մեռնի ջանիդ Հըրայր: (Համբուրում է եւ կրծքին սեղմում):

ՀՐԱՅՐ. (Գովնլով). Ի՞նչպէս ես, ի՞նչպէս: (Յետոյ փարվելով նղորով). Սրբէ, օ, ինչպէս մեծացել ես. կօլէճից վերադառնալուց յետոյ չէի տեսել: Տղամարդ ես, աղամարդ:

ՍՐՔԷ. Դէ առիւծի եղբայրը ինչ պիտի լինի:

ՄԱՐԶԱՆ. Մեռնեմ երկուսիդ էլ հոգուն, իմ միսիթարութիւնը, իմ երջանկութիւնը դուք էք, միայն դուք... Հրայր ջան... (Համբուրում է):

ՀՐԱՅՐ. Լաւ, լաւ, երես մաշեցիր, մէկ նայիր, հիւրեր եմ բերել, հիւրասիրիւ է:

ՄՔԷ. (Մօտենալով և Մարջանի ձեռքը համբուրելով). Ես էլ որդկերանցիցդ մէկըն եմ, օրհնիր:

ՄԱՐԶԱՆ. (Համբուրելով ծակատը). Ինչ ասեմ որդի, Աստված քանդէ մեր թշնամուտունը, որպէսզի ձեզ պէս ջիվան աղերքը սարէսար չընկնեն. ինչ ասեմ, Աստված ձեզ ձեր սրտովը տայ: (Միա տղերքն էլ ժօտնում և ձեռքը համբուրում են, իսկ նա էլ նրանց ծակատը. յետոյ բարևում են Սրբէին): Օ, ինչ աղերք ես, վայ ձեր մայրի-

բին, ձեզ հասցրել, բուսցրել ես, որ այդ գեղեցիկ ճակատներդ գնդակին դէմ առք, որ այդ լայն կրծքերով հազարավոր թիւրքերի սփիններին զիմադրէք... Ի՞նչ ասեմ, ինչ, Աստված ինքը հասնի:

ՀՐԱՅՐ. Մայրիկ, բան չկայ, քաջ եղիր, եկել ենք Սրբէին էլ տանելու. բա ո՞վ էր առում քեզ, որ այդպիսի աղէրք ունենայիր:

ՄԱՐԶԱՆ. Տա՛ր, տա՛ր, նրան էլ տա՛ր... Քանի փոքր էիք, հետու օտարութեան մէջ ուսման գնացիր, այժմս էլ... է, ձիւնը մայրերի դիսին, կեանքը դարձել է անտանելի. սա ի՞նչ կեանք է, դժօխք է, դժօխք: Միենայն է, թող նա էլ գայ, նոր չէ այս բանը, միշտ մեր աչքը թաց է եղել, մեր բաժինը արցունքն է եղել: Այդպէս ենք ծընվել, այդպէս ենք ապրել, այդպէս էլ պիտի մեռնենք:

ՀՐԱՅՐ. Մերի, թող գրանք, քաղցած ենք, հաց, հիմայ հաց է պէտք մեզ:

ՄԱՐԶԱՆ. (Նորից համբուրելով). Թող մի կշտանամ, յետոյ: (Սրբէին). Սրբէ, փրկիր սփոռցր:

ՍՐՔԷ. (Կապոցը քանալով սփոռցր փը-

39488-67



ողով է եւ ուտելիքները շարում՝ վերանն).
Տղերք, ներող եղէք, մի աշնալիսի բան
չը կայ:

ՄՔԷ. Լաւ Սրբէ, մենք օտար չենք,
մեր կերածն ու խմածը լեռներում չոր
հաց, մքլած պանիր և ջուր է. փառք Աս-
տուծոյ, այստեղ ամեն ինչ կայ:

ՄԱՐԶԱՆ. Փառք Աստուծոյ, Աստված
ավել չէ խնայել: Տղերք արիք, նստեցէք.
Մքէ, առաջ արի: (Եղբորը նստում են սե-
ղանի շուրջը եւ ուզում են ուտել):

ՀՐԱՅՐ. (ուտելով). Ինչ կայ Սրբէ, ինչ
են անում մեր պատվելի մութասարիֆները,
գայմագամները, քիւրդ բէկերը:

ՄՐՔԷ. Է, թող Աստված սիրես, չգի-
տես նրանց բանը՝ թալան, առևանգում,
կոտորած, հրդեհ... Մի մասնավոր պատճառ
են փնտրում, որ աշխարհ քանդեն... Բայց
անցեալ օրը չգիտեմ ովքեր են եղել, լաւ
դաս են ավել քիւրդերին և թիւրք պաշ-
տօնեային:

ՄՔԷ. Ի՞նչ դաս:

ՄՐՔԷ. Թիւրք պաշտօնեան մի քանի
գինովորներով և քիւրդ համիրէականներով
գնացել էր Հացիկ գիւղը. էլ ինչ անխղճու-

թիւն, էլ ինչ խայտառակութիւն ասես ա-
րել էին, յետոյ էլ հետները առած մի քա-
նի նորահաս աղջիկերք, վերագտնալիս են
եղել գէպի Կոփ...

ՄԱՐԶԱՆ. (Չեղքերը վեր ըստնայն-
ով). Աստուծոյ կրակը թափի նրանց գլխին:
ՏՂԵՐԱՆՅԻՅ ՄԻ ՔԱՆԻՍԸ. Ամեն մերի:
ՄՔԷ. (Սրբէին). Յետոյ:

ՄՐՔԷ. Դէ յետոյ չգիտեմ սրտեղից,
մէկ էլ մի քսան ձիավոր մեր տղերանցից
իբր կոյծակ թափվում են դրանց վերայ,
էլ չեմ կարող պատմել, իբր մըրիկ խառ-
նում, խփում, ջարդում... Մի հինգ — տասը
քիւրդ ու գինովոր ընկնում են սրանց սրից,
գնդակից, իսկ միւսներն էլ թողնում, փախ-
չում... Մեր տղերքը վերագարձնում են
աղջիկերքն ու ապրանքը մինչև Հացիկ գիւ-
ղը, իրանք անյայտանում:

ՀՐԱՅՐ. (Հեզմական ժպտով խփելով
Մքէի ուսին). Ապրեն այդպիսի տղերքը:

ՄՔԷ. (Ժպտալով). Թող ապրեն: Մայ-
րիկ, ինչպէս, լաւ արե՞լ են:

ՄԱՐԶԱՆ. Լաւ, շատ լաւ, Աստված
նրանց սուրը կտրուկ անէ:

ՄՔԷ. Մարդ սպանելը չէ՞ որ մեզք է:

ՄԱՐԶԱՆ. Ի հարկէ մեղք է, բայց այդ սպանվածները մարդիկ չեն, զազաններ են, շներ... Օ, ինչ ասեմ, ինչ ..

ՍՐՔԷ. Երեկ էլ ասում են Շէնիկի մօտերքը մեծ կռիւ է եղել, երևի դուք էլ այնտեղ էիք. ասում են թիւրքերից շատ են ջարդվել:

ՀՐԱՅՐ. Սրքէ, Աստուծոյ կամօք դեռ էլի շատ կ'ջարդվեն:

ՄՔԷ. Քանի այս առիւծ եղբայրդ մըռնչում է այս լեռներում, դեռ շատ պէտք է լան թշնամու մայրեր:

ՍՐՔԷ. (Ոգետնելած). Ուրեմն դուք էք եղել. տնւր, եղբայր, տնւր համբուրեմ ձեռք: (Ուզում է համբուրել Հրայրի ձեռք):

ՀՐԱՅՐ. Լաւ, իմ ձեռը համբուրած կլինես այն ժամանակ, երբ դու էլ իմ շավդովս կգնաս:

ՄԱՐԶԱՆ. Ա՛խ, լաւ ես ասում, բայց չես մտնում պառաւ մօրդ գրութեան մէջ:

ՀՐԱՅՐ. Պառաւ մայրս քաջ կլին է, նա ոչ միայն իր որդկերանց, այլ մինչև անգամ իրան էլ կգոհէ այդ սուրբ գործին:

ՄԱՐԶԱՆ. Զգիտեմ, չգիտեմ ինչ ասեմ: Գնացէք, դու էլ գնայ Սրքէ, մեր

կեանքը այդ է. պահանջում: Թողէք ինձ միայնակ, աչքս դէպի սօրերը, արցունքը այտերիս վերայ: Թողէք ինձ անմխիթար, որպէսզի հացի բրդուջն էլ կուլ չգնայ: Գնա՛, որդիս, դու էլ գնա. չէ՛ որ ամենքս էլ տանջանքի մէջ բաժին պիտի ունենանք. իմ տանջանքն էլ ջիվան որդոցս կարօտը թող լինի: (Աչքերն է սրբում):

ՀՐԱՅՐ. (Մարջանին կրծքին սեղմելով): Մերի, հոգիս, մի լար, Սրքէին չենք տանի, բողբոլին չենք քանդի մեր հօր օջախը:

ՄՔԷ. Մայրիկ, ասում էիր քաջ եմ, ա՛յդ է քո քաջութիւնը, որ արտասովում ես:

ՍՐՔԷ. (Հեզնելով). Մայրս լալու մէջ շատ քաջ է:

ՄԱՐԶԱՆ. Է, որդիք, մայր եմ մայր. թող քարանայ, կարծրանայ սիրտս: Ես հոգով եմ ուզում, որ ոչ միայն տղերքս, այլ ես էլ, իմ աղջկերքն էլ, բոլորը, բոլորը թող գոհվեն, բայց սիրտս, ա՛խ, թերմաշ մնայ... (Մեղմ լաց է լինում):

ՀՐԱՅՐ. Լաւ, լաւ, փառք Աստուծոյ, հիմայ իս տղերքդ մօտդ են, ինչո՞ւ ես լաց լինում:

ՄԱՐԶԱՆ. Ինչո՞ւ, ես ինչ գիտեմ ինչու: (Համըտըելով Հրայրին). Ախ, Հրայր, Հրայր: Աստ գիշերները քնում եմ, աստ մտքիցս գուրս գալիս ես. այդ խոժոռ, հուժկու պատկերդ միշտ աչքերիս առաջն է: Այս արցունքը նոր չէ, շատ, շատ կարօտ օրերի արդիւնք է, որը միտերված էր կրճքումս, այժմս էլ ուրախութիւնիցս չեմ կարող արցունքս զսպել: (Համըտըելով Հրայրին):

ՀՐԱՅՐ. (Կրծքին սեղմելով կաթոզին). Մերէ, առողջ եղիր, ապրէ, որ մեզ բոլորիս միշտ օրհնես. քո օրհնութիւնը ամենից բարձր է մեզ համար: (Դառնալով Սրբէին). Սրբէ, հավաքիր սեղանը, մենք շտապում ենք:

ՄԱՐԶԱՆ. (Կախ ընկնելով Հրայրի ուսից). Ո՞ւր որդի, գոնէ մի գիշեր մօրդ միխիթարիք, յետոյ Աստված բարի ճանապարհ տայ:

ՀՐԱՅՐ. Չէ մերի, ամեն բոլկն թանգ է մեզ համար. ո՞վ գիտէ, հէնց այս բոլկիս այս գժոխքում ինչեր են կատարվում, ո՞վ գիտէ, թէ որքան անտէրունչ մայրեր ողբում են իրենց որդկերանց գիերի վրայ,

ո՞վ գիտէ, որքան որբ այրիներ, արցունքօտ աչքերը գէպի Սասնոյ լեռները անկած մեզ են սպասում. թո՞ղ մերի, թո՞ղ, որ պարտքերս կատարենք:

ՄԱՐԶԱՆ. Ո՛չ, ո՛չ, այս գիշեր իմ հիւրն էք: (Համըտըելով Հրայրին). Մեռնի մէրիդ այդ լոյս երեսիդ:

ՄՔԷ. Մայրիկ, այս գիշեր Պաշ գիւղ հարսանիք ենք հրավիրված. մեր ընկերներից իզիթ Գրգօն պսակվում է: Ես խօսք կտամ, որ երկու օրից յետոյ կգանք և մի գիշեր կմնանք:

ՄԱՐԶԱՆ. Լա՛ւ, համաձայն եմ, բայց նայէ Մքէ, եթէ սուտ գուրս եկար, այն ժամանակ ես գիտեմ ու գու...,

ՄՔԷ. Լա՛ւ, ագնիւ խօսք եմ տալիս:

ՍՐՔԷ. (Թողնելով կապոց կապելը).

Պաշ գիւղ, ո՞ւմ աղջիկը:

ՀՐԱՅՐ. Լաւ աղջիկ է, Սրբէ, եթէ Գրգօն չլինէր. ուղիղն ասած մտադիր էի քեզ համար ուզելու:

ՍՐՔԷ. (Ծոյն ղերքով, ժոպլ). Ո՞ւմ, ո՞ւմ աղջիկը:

ՄՔԷ. Գրգօն բախտավոր է, լաւ աղջիկ է, շատ լաւ: Միտ ուեսի աղջիկ Գիւլիգարը:

ՄՐՔԷ. (Բաց թողնելով ձեռքի կապոցը, սփրանձած ծակատը ընկելով). Չէ... տնկուրեւի է...

ՀՐԱՅՐ. (Մօտենալով). Ի՞նչ է Սրբէ, ինչո՞ւ սփրանեցիր, ինչո՞ւ անկարելի է:

ՄՐՔԷ. Որովհետեւ, ժ... (Կըքոտ ձեռքը թափահարելով):

ՀՐԱՅՐ. Որովհետեւ ի՞նչ...

ՄՐՔԷ. Որովհետեւ Գիւլիգարը ինձ խօսք էր տվել. ես ու նա իրար սիրում էինք... Այդ անկարելի է:

ՄՐՔԷ. Սրբէ, ես այդ չգիտեմ, բայց այն գիտեմ, որ էգուց Գրգօն պսակվում է ու էս Միօի աղջիկ Գիւլիգարի հետ: Լաւ, ինչո՞ւ ես դարդ անում, այգում չկայ խընձոր, այդ աղջիկը չեղաւ, առ մի ուրիշը, փառք Աստուծոյ, աշխարհս շէս:

ՄԱՐՋԱՆ. Լաւ Սրբէ ջան, աղջիկ շատ, այդ չեղաւ, հէնց էգուց մի ուրիշը կառնենք: Ամօթ է, տղամարդ չէս:

ՀՐԱՅՐ. Խեղճ Սրբէ, եղածը օրհնած է, եթէ Գրգօն գիտենար, նա չէր առնի այդ աղջկան: (Ուսին մեղմուլթեամբ խփելով). Մոռացիր սիրելիս, մի ուրիշով փոխիր Գիւլիգարին:

ՄՐՔԷ. (Տխուր, մտածկոտ, ցրված): Կմոռանամ... Բայց նա ինձ խօսք էր տվել: մի երկու ամիս հազիւ կլինի, որ վերջին անգամ ինձ տեսաւ. Կոփի ձորակում և կուսական համբույրով երգվեց իմը լինել:

ՄՐՔԷ. Դէ Սրբէ, կլինի, գէպք է, երևի Գրգօին տեսնելով մոռացել է այդ ուխտը:

ՄՐՔԷ. (Հեզնական, մ'ուայլ). Մոռացել է... Լաւ, ես էլ նրան կմոռանամ, կմոռանամ ամեն ինչ:

ՄԱՐՋԱՆ. Սրբէ, երեխայ չես, ի՞նչ եղաւ քեզ:

ՀՐԱՅՐ. Սրբէ, ես, քո մեծ եղբայրը, իբրև հայր խնդրում եմ, որ մոռանաս: Տղամարդուն ամօթ է, որ մի աղջկայ համար երեսը այգուէս թթվեցնում է. թիւ, նամուս, ի՞նչ եղաւ քեզ. (զղակը շտկելով.) գղակդ շտկիր, (կզակեց ընկելով.) մի ուղիղ նայիր երեսիս: (Ժիծաղելով). Այսպէս, այսպէս: Դէ, դէ մի ժպտ:

ՄԱՐՋԱՆ. (Ժիծաղով). Վայ, Սրբէ, տես թէ ինչ բաներ կայ եղել, բա ինչո՞ւ օր առաջ ինձ չէիր առում:

ՄՐՔԷ. Դէ դատարկ բան է, մի բոպէ էր, եկաւ անցաւ:

ՍՐՔԷ. (Մուսյլ հեզնականն.) Այն, դատարկ բան է, դատարկ, դէ, ինչ բան է մարդու սիրտը, մի կտոր միս...

ՀՐԱՅՐ. (Մօր ձեռն համբուրելով, նա էլ երեսը). Մերի, մնաս բարև, օրհնիր:

ՄԱՐՁԱՆ. Մերիդ մեռնի երեսիդ, Հրայր... Բայց միւս գիշեր գալու էք, հն. (Մքէի ծակատն համբուրելով). Մքէ, եթէ չգաք, շատ կհեղանամ:

ՄՔԷ. Լաւ, մայրիկ, անհող եղիր:

ՀՐԱՅՐ. (Համբուրելով Սրքէին). Մնաս բարև, Սրքէ, քաջ եղիր, դատարկ բաների համար մի տխրիր:

ՄՔԷ. (Սրքէին ձեռք տալով). Տղա, Սրքէ, ինչքան կանանցից հեռու լինես, այնքան Աստծոյ մօտիկ կլինես. մնաս բարև, ահա իմ վերջին խորհուրդը:

ՍՐՔԷ. Գնաս բարև, ճիշտ, շատ ճիշտ ես ասում:

ՄԱՐՁԱՆ. Մքէ, այդ ինչ ասիր:

ՄՔԷ. Մայրիկ, քո բանը ուրիշ ես քեզ համար չեմ ասում: (Ժիծաղելով գնում է. մնաս բարև անելով գնում են եւ մ'իսնորը):

ՀՐԱՅՐ. Դէ մտաք բարև, քաջ եղիր

Սրքէ, մենք էզուց երեկոյեան կը գանք: (Գնում է):

Տ ե ս ի լ Յ.

ՄԱՐՁԱՆ ԵՒ ՍՐՔԷ.

(Սրքէն մուսյլ, տիրանած նստում է ժայռի բեկորի վերայ, ձեռքը ճակատին, մտածմունքի մէջ. Մարջանը մօտեւալով և փազաքշելով):

ՄԱՐՁԱՆ. Սրքէ, մոռացիր, էլ Գիւլիզար-չկայ, ինչ արած որդի, այդպիսի բաներ տյնքան է լինում սր... Աշխարհս շէն, մի ուրիշը ընտրիր, ավելի գեղեցիկը, ավելի լաւը:

ՍՐՔԷ. Մէրի, հեշտ է ասել, Գիւլիզար չկայ, բայց սիրտս ցավում է, հոգիս տխուր է, չեմ կարող մոռանալ, չէ: Օ, Գրգօ, չէ որ դու գիտէիր իմ սէրը, ինչո՞ւ արիր... Բայց դու մեղավոր չես, ես գիտեմ մեղավորը ով է:

ՄԱՐՁԱՆ. Այն գետինը մտած Գիւլիզարն է, է. արժէ որդի, այդպիսի աղջկայ համար մտածել:

ՍՐՔԷ. Մի ասիր, մերի, մի ասիր:

ես ապրում էի միայն Գիւլիգարի համար, բա ես ինչ էի անում այստեղ, երբ ամբողջ երկիրը տակնուվրայ էր, երբ քարը քարի վրայ չէր մնացել, երբ քաջ որդիք ան ու սարսափ էին գցել մեր թշնամեաց վերայ, երբ իմ ընկերների արիւնը ցողել էր այս մեր սուրբ երկիրը, երբ մեր մայրերը, քոյրերը օգնութիւն, օգնութիւն էին պագատում, երբ իմ եղբայր, առիւծ Հրայրը աշխարհ էր դրդացնում, ես թշվառս, ես խեղճս ապրում էի միայն Գիւլիգարով: Օ, Գիւլիգար, Գիւլիգար, շատ ծանր հարված է ինձ համար, ավելի լաւ էր, որ դահուկ ցցէիր կուրծքս, քան թէ այդպիսի մի խոր վերք բանայիր սրտումս: Ա՛խ... (Ցաւահոտ թափահարում է գլուխը):

ՄԱՐԶԱՆ. Լաւ Սրբէ, բավական է, գնանք տուն:

ՍՐԲԷ. Մերի, գու գնայ, ես քիչ մնամ, ասք գլուխս գով հովին ասամ, յետոյ կգամ:

ՄԱՐԶԱՆ. Գնանք որդիս, մի մտածիր:

ՍՐԲԷ. Խնդրում եմ մերի, թող ինձ մենակ, քիչ հանգստանամ, կգամ:

ՄԱՐԶԱՆ. (Կապոցը առնելով). է, խենթ երիտասարդութիւն, բանն էլ բան լինի,

աղջիկ, էլ սուրիշ. Սրբէ, վեր կաց գնանք:

ՍՐԲԷ. Լաւ, մերի, գու գնայ, ես խնայն կը գամ:

ՄԱՐԶԱՆ. Սրբէ ջան, երեսիդ մեռնեմ, մի մտածիր: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ 4.

ՍՐԲԷ ՄԻԱՅՆԱԿ.

ՍՐԲԷ. (Մոտոյ). Հեշտ է ասել մի մտածիր, հեշտ է ասել, մի աղջիկ, էլ սուրիշ... Բայց բացէք սիրտս, տեսէք թէ սրբան կսկծոտ է վերքս, թէ սրբան մորմորում է հոգիս: Գրգօ, Գրգօ, գու պիտի այդ չանէիր, չէ՞ որ գու զիտէիր... Ա՛խ, Գիւլիգար, չգիտեմ ում մեղադրեմ... (Խոր մտածմունքի մէջ է, մի քանի վայրկեան լուրջ թիւն). Օ, երկինք, վերջ սուր, կարէ թելը կեանքիս. ինչո՞ւ այսպիսի բոպէսներում մարդ մոռանում է ամեն ինչ. ինչո՞ւ կամքը թուրանում է, խղճի ձայնը խեղդվում, իսկ վատ մաքերը մէկը մէկի յեակից ծրագրներ են առաջարկում, որ վրէժխնդիր լինեմ, որ վերացնեմ մէջ տեղից Գրգօին, տիրանամ Գիւլիգարին... (Աղիւղողով, նրեւը ձեռներին մէջ

ըռնելով). Ո՛չ, ո՛չ, հեռու ինձանից վատ մտքեր, հեռու: Մի՞թէ ես, Հրայրի եղբայրը այդքան պիտ ստորանամ... Ո՛չ, մի աղջկայ համար չարժէ... Գրգո, Գրգո, ի՞նչ արիր, ինչո՞ւ ստիպեցիր ինձ, որ մինչև անգամ մտքիցս այդպիսի բաներ անցկացնեմ քո մասին... (Եւր մտածմունքի մէջ, աչքերը չուած, մ'ի քանի վայրկեան լուռ թիւն). Բայց մեղավոր է նա, մեղավոր. նա ինձ դավաճանեց, նա ինձ ստորացրեց, նա իբր մի անպէտքի ինձ ցեխը մտցրեց և ո՞վ գիտէ, հէնց այժմս էլ Գիւլիգարի թեքի մէջ ծաղրում է ինձ... Ծագրե՛լ Սրբէին... Օ, այդ անտանելի է: (Յուզված ման է գալիս). Կթքեմ ամեն ինչու վերայ, բայց քեզ կոչնչացնեմ Գրգո: Եթէ դու չխնայեցիր քո մօտ ընկերիդ, եթէ դու ծաղրեցիր իմ սէրը, ո՛, ես էլ գիտեմ միջոցը վրէժխնդիր լինելու: Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից պարտականութիւն, ընկերական սէր, մեծահոգութիւն... Սրբէն անարգված է, Սրբէն անպատված, բայց Սրբէն գիտէ Գիւլիգարին տիրանալու եղանակը... (Յասկոտ դուրս է գնում):

Վ Ա Ր Ա Կ Ո Յ Ր

Ղերջ առաջին գործողութեան:

ԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Տեսարանը ներկայացնում է հայկական գիւղ: Բեմի խորքում երևում են գիւղական խրճիթներ, յետը ծառեր, շատ հեռուն լեռներ, իսկ բեմի առաջ գիւղամիջի հրապարակ, որի չորս կողմից բացվում են նեղ փողոցներ):

Տ Ա Ս Ի Լ 1.

ՍՐԲԷ ԵՒ ՍԼՕ.

(Մթութեան մէջ, չորս կողմերը նայելով, առաջ են գալիս գէպի հրապարակը):

ՍԼՕ. Ո՛չ ոք չկայ:

ՍՐԲԷ. (Տխուր). Ո՛չ ոք բէկ, նրանք ուրախանում են:

ՍԼՕ. Քիչ յետոյ ես կուրախացնեմ նրանց: Ուրեմն ասում ես, որ դու Հրայրին խաբելով ուղարկեցիր Շէնիկ, իբր թէ ես էզուց այնտեղ յարձակում պիտի գործեմ և նա գնաց:

ՍՐԲԷ. Այո բէկ:

ՍԼՕ. Ե՞րբ դուրս եկաւ այստեղից:

ՍՐԲԷ. Մթին մի ժամ կար:

ՍԼՕ Թող գնայ խենթ Հրայրը Շէնի-
կում Սլօ որոնէ, իսկ ես այստեղ իմ սրի
վերայ նրա ընկեր իգիթ Գրգօին պար խա-
ղացնեմ: Օ, ինչպէս պիտի կատաղի, ինչ-
պէս պիտի փրփրի, բայց ճար չկայ, Սլօն
հեռու կլինի: Հագիվ վրէժս պէտք է լուծեմ
Հրայրից. միևնոյն է, թող Հրայրը չը լինի,
թող լինի նրա աջ բազուկ Գրգօն: Հն, ինչ
մուսյլ է դէմքդ, Սրքէ:

ՍՐՔԷ. (Վարանտ). Ոչինչ, այնպէս...
միայն բէկ, ինչպէս խօսք ես ամէլ և երդ-
վել, այնպէս էլ վարվիր. խնդրում եմ
ժողովրդին ձեռք չտաք:

ՍԼՕ. Բանիդ նայիր, ես ինչ գործ ու-
նիմ խեղճ ժողովրդի հետ, իմ հաշիվը Հրայ-
րի և ընկերների հետ է: Շատ են նրանք
մեզ վիրավորանք հասցրել, հագիվ նրանց
ընկերներից մէկը թակարդն է ընկել: Ես
Գրգօին կը կալանավորեմ և կը հեռանամ:
(Մտերմաբար ուսին խփում է.) Այն ժամա-
նակ իգիթ Սրքէս, Գիւլիգարը կմնայ քեզ:

ՍՐՔԷ. (Մոռայլ). Իրտեմ բէկ, հաժա-
տացած եմ, որ դուք խօսքիդ տէրն էք,
բայց և այնպէս կրկնում եմ, որ ինչպէս
ես ձեզ լավութիւն արի, այնպէս էլ դուք

ինձ այդ բարութիւնը արէք:

ՍԼՕ. Անհող եղիր Սրքէ, ես ասել եմ
և էլի կասեմ, որ իմ հարեաններին մի մա-
ղը մինչև անգամ ինձ համար թանգ է, իմ
գործը ավագակների հետ է: Թէև Հրայրը
եղբայրդ է, թէև նա շատ քաջ է, բայց
խօսքը մեր մէջ մնայ, համարդ է: Ինչ
աղամարդութիւն է լեռներում մարդ սպա-
նելը. աղամարդ է, թող գն այստեղ, որ-
տեղ իրա պէս քաջեր կան:

ՍՐՔԷ. Դէ բէկ, ամեն մարդ իր գործը
գլխէ, ես ինչ ասեմ:

ՍԼՕ. Հասկանում եմ, հասկանում,
դուն էլ եղբօրդ կտորն ես, բայց այսօր
ինձ մեծ ծառայութիւն մատուցիր, շնոր-
հակալ եմ, աչքի առաջ կունենամ քո այդ
լավութիւնը և կկատարեմ քո խնդիրը: Դէ,
մնաս բարև, ես գնամ, որպէսզի ժամանա-
կին վերայ հասնեմ: (Դնում է):

ՍՐՔԷ. Գնաս բարև:

Տ և ս ի Լ 2.

ՍՐՔԷ ՄԻՍՅՆԱԿ.

ՍՐՔԷ. (Մոռայլ, ախտը). Ինչ արի, իբր

երեխայ խաղ արի կրակի հետ և այժմ իմ հայրական տան, իմ հարևանների գլխին կախված է երկսայրի սուրբ: Սրբէ, Սրբէ, մի աղջկայ համար, մի ուխտադանց կնոջ համար մտար մատնիչի դերի մէջ: Օ, կիրք, ճ, վրէժխնդրութեան զգացմունք, առանց թոյլ տալու, որ մարդ ինքը իրան հաշիվ տայ, մղում ես նրան դէպի ցեխը, կուրօրէն գործել ես ապրիս ամեն տեսակ չարիք: Այն, կուրօրէն, և երբ արդէն շարիքը կատարված է, միայն այն ժամանակ մարդս ազատ մտածում է, գատում է, հաշիվ է տալիս ինքը իրան... Բայց ի՞նչ անեմ... այժմ արդէն ուշ է, յիսուս համիդէ ձիավոր և այդքան էլ արիւնուուշտ թիւրք զինվորներ գիւղի ձորակումն են, իսկ գիւղացիք խեղճ, անդէն, անճար... Այստեղ կայ մի Գրգօ միայն և մի մատնիչ Սրբէ... Իսկ Հրայրը իր ընկերներով շատ հեռու է... (Մտածմունքի մէջ է, սթափվելով). Բայց ուշ չէ, միայն մի ժամ է, որ Հրայրը հեռացել է այստեղից, նրանք շատ կամաց կգնան, որովհետեւ ես ասել եմ, որ Սլօ բէկը էզուց պիտի Շէնիկ գնայ: Կթըռչեմ ձիուս վերայ և մի ժամից Հրայրին և

իր ընկերներին յետ կբերեմ... Օ, առողջ բանականութիւն, ճ, խիղճ, ուշ էք գարթնում և ուշ ցոյց տալիս ուղիղ ճանապարհը: Պէտք է շտապել, ժամանակը թանգ է... (Շտապով գնում է):

Տ և ս ի լ Յ.

ՍԼՕ ԵՒ ՄՊԱՅ.

ՍԼՕ. (Սպայի հետ ներս մտնելով). Հն, հն, հն... Քիչ առաջ մեր անխեղք Փլան ձիու ահանջը մտած, ինչպէս մի ծիծեռ թռչում էր և մօտիցս անցնելով մինչև անգամ ինձ հնկատեց, երևի շատ է վախենում, որ գիւղացիք կարող են տեսնել նրան այստեղ և կասկածել: Նա կարծում է թէ ես իբր միայն Գրգօին կբռնեմ, իսկ գիւղը ազատ կմնայ: Վայ նրանց, ես ցոյց կտամ, թէ ինչ կնշանակէ ավագակներին պատասպարել, հիւրասիրել և մինչև անգամ նրանցից մէկին էլ կնութեան աալ աղջիկ... Դեռ թող ուրախանան:

ՄՊԱՅ. Հագիվ Հրայրից վրէժներս պիտի լուծենք:

ՍԼՕ. Այո, և ի՞նչպէս Հիւսէին բէկի հողին կճրճվի երկնքում, երբ այս ամբողջ գիւղը քարուքանդ կանեմ, երբ այդ շուն Գրգօին ցցի կնասացնեմ և գողարիկ հայ հարս աղջկերբ էլ թավալազլոր կբերեմ փափրիկ անկողիններում:

ՍՊԱՅ. Ասում են շատ գեղեցիկ է նոր հարսը, երանի նորա գրկողին:

ՍԼՕ. Դէ, երևի քիչ յետոյ այդ երանութեան մէջ մենք կլինենք:

ՍՊԱՅ. Այդ հիւրին քեզ է վայել, իսկ ինձ... (Աչքը թարթելով). Ոսկի, ոսկի է պէտք:

ՍԼՕ. Դէ, այս էլ կայ, այն էլ, դու քո ոսկու յետեից ընկիր, իսկ ես էլ իմ սավդայի... Ա՛խ, գեղեցիկ են անիրամները...

ՍՊԱՅ. Է՛, բան ասա, եթէ ոսկին եզով, այդպիսի հարիւրը կլինի: (Հսկում է հեռվից մէջի ձայն եւ թմրուկի որոտ). Արդէն ժամանակ է, հարսնաոր շուտով եկեզեցուց դուրս կգայ, ես գնամ:

ՍԼՕ. Լսիր է՛ֆէնզի, ուրեմն ես հարսնաոին կսպասեմ այս կողմերը, իսկ դուն էլ քո զինվորներով գիւղի չորս կողմից կրակ սուր, թալանիր, կոտորիր... Մի

խօսքով առաջի անգամը չէ, գիտես թէ ինչ պիտի անես:

ՍՊԱՅ. Ասառձով կկատարեմ այնպէս, ինչպէս որ պէտք է: Դէ Աստված քեզ հեռ: (Ձեռը տանում է ըերանին եւ գլուխը խոնարհացնում):

ՍԼՕ. Չգուշ և անինայ եղիր; վախենալու ոչինչ չունենք, որովհետեւ գիւղում զիմազրոյ ոչ ոք չկայ... (Նոյնպէս քարեւելով, ձեռը ըերնին, գլուխը խոնարհացնելով). Ողջ եղիր... (Գնում է աջ, իսկ սուան ձախ):

Տ ե ս ի յ 4.

ՀՐԱՊԱՐԱԿ ԵՆ ՄՏՆՈՒՄ ՉԱՆԱԶԱՆ ԿՈՂՄԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԱՅԻՔ.

(Մէկը մի գառ բռնած, միւսը մատուցաբանով սուրճ բռնած, երրորդը մի լավաշ հաց ձեռին, չորրորդը մի պնակ խնձոր, իսկ երկու ըմբիշներ էլ կիսամերկ: Հեռվից շարունակ լսվում է մեղմ մէջի ձայնը թըմբիկի արմտըմբոցի հետ):

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Դէ, դէ՛ շուտ արէք, կնքահայրը հարուստ մարդ է, կարելի է

լով փող ստանալ:

I ԵՐԻՏ. Ես ինչ գիտեմ, այնպէս էիք կորել, որ կարծես թէ մի թանկագին բան էք. ախր ամեն օր Գրգօ չի պսակվի և Մինաս քէհան էլ կնքահայր չի լինի:

III ԵՐԻՏ. Է. գրանք էլ երբ պիտի գան, սուրճը սառեց:

I ԸՄԲԻՇ. Հն, Յանէս, չնեղանաս, այսօր հանաք չեմ անում, մի լավ պիտի գրիկացնեմ:

ՄԻԻՍԸ. Լնվ, լնվ, մի պարծենար, կը աեսնենք:

Տ և ս Ե Լ 5.

ՆՈՅՆՔ ԵՒ ՀԱՐՄՆԱՌԸ.

(Թմբուկի ձայնը հեռոցհեռէ մօտենում է, բեմ են գալիս մի քանի շահակիրներ, որոնց ձեռներում երկաթէ ձողերի վերայ ցցված են ձիւթոտված բոցավառ աթարներ: Հեռոցհեռէ բեմը լցվում է ժողովրդով, աջ կողմից երևում են մէյի ածոյնները և թըմբկահարը. գրանցից յետոյ արդէն երևում են հարսը, թագվորը, կնքահայրը և գրանց

շուրջը մի քանի պատվավոր մարզիկ: Հանգէսը ընթանում է աջից ձախ):

I ԵՐԻՏՍՍ. (Գառը խփում է նորապսակներին առաջ գեաին և դանակը հանելով ուզում է մորթել. հարմատը կանգ է առնում). Ձեզ ընծայ:

ԿՆՔԱՀԱՅՐ. Լնվ, լնվ, մի մորթիր, առ ընծագ: (Ձի թողնում և փող է տալիս, երեսասարդը վերցնում է և հեռանում):

II ԵՐԻՏՍՍ. (Մատուցանելով սուրճ). Համեցէք ազն, ցանկանում եմ առողջութիւն նորապսակներին:

ԿՆՔԱՀԱՅՐ. (Փող տալով). Շնորհակալ եմ: (Սուրճ տվողը հեռանում է. յետոյ մէկը ընրում է պնակով խնձոր, միսը հարսի և փեսի ոսերին է զցում լասաշ հաց զանազան քարեմաղթիմներով. կնքահայրը շնորհակալ է լինում և փող տալիս: Ամենից վերջը կիսամերկ ըմբիշները զոսեմարտում են):

I ԸՄԲԻՇ. (Գոտեմարտելով II-ի հետ).

II ԸՄԲԻՇ. Գիտեցիր թէ ում հեա ես...

I ԸՄԲԻՇ. Դէ աեսնենք...

II ԸՄԲԻՇ. Տեսնենք... (Քիչ քաշկրտում են, առաջինը յանկարծ պառկում է

և երկրորդին զլիսի վերայից մի կողմն է շարաւում և իսկոյն վերկենալով դարձնում է կրնակին և չոքում կրծքին):

ԲՈՂՈՐԸ. Ապրէ, Յանէսը, ապրէ, քաջ ես քաջ...

ԿՆՔԱՀԱՅՐ. (Թեերից բռնելով և երկուսին էլ վեր վերցնելով ու փոզ բաշխելով). Ապրէ՛ք, ապրէ՛ք: (Ըմբռնելով հետնում են). Դէ՛, աղէրք մի պար էլ ածեցէք ու գնանք, ուշ է:

(Մէյի ածողները սկսում են մի պար երգ: Հանգիստահաններից շատերը շրջան բռնած պարում են, իսկ մի մասն էլ շրջանից հեռու կանգնած համաչափութեամբ ծափահարում: Քիչ յետոյ մէկը սպրանսած, հեղիհեղ ներս է մտնում):

ԳՈՒՓԿԱՆ. է՛յ, երջանիկ մարդիկ, պարում էք. փախէ՛ք... փախէ՛ք... Քիւրդերը եկեղեցին պաշարել են, մի մասն էլ այս կողմն են գալիս: (Պարը դադարում է, նվազը լուծ, ժողովուրդը սկսում է ցրվել. կանայք լաց են լինում, խառնվում իրար):

ԳՐԳՕ. (Սուրը քաշելով.) Հնա՛, ինչ շվարեցաք. (Խառնալով հասակավորներին.) Հարսին տարէք տուն: (Խառնալով մի քանի

սրավոր երիտասարդներին). Իսկ դուք տըղերք, արիք իմ մօտը. կնքահայր, խնդրում եմ Գիւլիգարին տուն տար:

ԿՆՔԱՀԱՅՐ. Ուղիղ է ասում, բայց միտսին էլ կարող ենք անել:

ԳՐԳՕ. (Ընաջ զալով). Կարող ենք, չենք կարող, այդ գործը ցոյց կտայ: Տղերք, շրջապատեցէք կանանց: Քաջ եղէք: զգոյշ, դէ՛, գնանք... (Ուզում են գնալ, ներս են լցվում քիւրդ և թիւրք զինվորները. քիւրդերը սրերը մերկացրած, թիւրքերը հրացանները պատրաստ բռնած):

Տ ե ս ի լ Ե.

ՆՈՅՆՔ, ՍԼՕ ԵՒ ՔԻԻՐԴ ՈՒ ԹԻԻՐՔ
ՉԻՆՎՈՐՆԵՐ.

ՍԼՕ. (Հէքնական). Ո՛ւր պատվելի Իրգօ բէկ. (Կատաղի.) կանգնեցէք գեավուրներ, շներ, ես ձեզ հարսանիք ցոյց կտամ, մի այնպիսի պար կխաղացնեմ, որ միշտ յիշէք Սլօ բէկին: Կանգնեցէք: (Ժողովուրդը սարսափած փախչում է, մնում են կրնքահայր Մինաս քէհան, Գիւլիգարը, Գրգօն

և մի երկու երիտասարդ մերկացրած սրերով. զինսփորներից մէկը խլում է մի աղայի ձեռից ջահը և յեանում կանգնած, ձողը բարձր բռնած լուսավորում է բեմը: Հեռվից լսվում է շների խուլ հաջոց, հրացանների որոտ, ազազակ և տեղ տեղ երևում են հրդեհի բոց ու ծուխ:

ԳՐԳՕ. Տղերք, կոնակներդ պատին. (Բռնելով Գիւլիգարի ձեռից). Գիւլիգար, մի վախիր քանի ես քո մօտն եմ:

ԳԻԻԼԻԶԱՐ. Ա՛, Գրգօ, Գրգօ, այս ինչ ձիւն եկավ:

ԳՐԳՕ. (Քնքուշութեամբ). Հողիս, հանգըստացիր, կամ կմեռնենք, կամ չուրս կը քշենք այս շներին:

ՍԼՕ. Հա՛, հա՛, հա՛... Անխելք Գրգօ, ուշ է, թեերդ ջարդված են, Հրայրը հեռուն: (Գրքոտ). Գրգօ, անձնատուր եղիր, զուր է, մի մանիր այս աղերանց արեան մէջ:

ԳԻԻԼԻԶԱՐ. Բէկ, բէկ, երկնքում Աստված կայ, ինչ ես ուզում մեզանից:

ԳՐԳՕ. Թո՛ղ, մի խօսիր այդ անպիտանի հետ:

ՍԼՕ. Սիրուն աղջիկ, ես համաձայն եմ, ես ձեզ հետ ոչինչ չունիմ, եթէ քո ավա-

զակ նշանածը ինքնակամ յանձնվի մեզ:

ԳՐԳՕ. (Գրքոտ). Սլօ, ինձ հետ խօսիր, դէմդ կանգնած եմ ես. ահա սուրս բաց է, հանիր քսնը: Եթէ միայն ինձ համար ես ես եկել, էլ ինչո՞ւ եկեղեցին պաշարեցիր, ինչո՞ւ մարդիկ սպանեցիր, ինչո՞ւ չորս կողմերս հրդեհի բոցերով լցրիր, կեղծավոր... Տղերք, քաջ եղէք, միայն դուք ձեզ պաշտպանեցէք:

ՍԼՕ. (Հէզնակաւ). Ապրես խենթ Գրգօ, ժանգոտ սրերով պիտի դիմադրես յիսուն հրացանի: Ասում եմ անձնատուր եղիր:

ԳՐԳՕ. Գիտեմ, Սլօ, գիտեմ քեզ, այստեղ քո ճանապարհի վերայ միայն փուշը ես եմ, զու ուզում ես առանց կովի վերացնել ինձ մէջ տեղից, որպէսզի միւսներին ինչպէս ոչխար մորթես:

ԳԻԻԼԻԶԱՐ. Գրգօ, սիրելիս, անձնատուր եղիր, թէ չէ կսպանեն քեզ, յետոյ ես ինչ պիտի անեմ: Օ՛, Աստված... (Լաց է լինում):

ԳՐԳՕ. Ես ինձ կգոհէի, եթէ հավատացած լինէի, որ դուք ազատ կմնաք: Լավ եմ ճանաչում սրանց, ինձանից յետոյ բնկեր-

ներիս իբր ոչխար կմորթեն, իսկ քեզ... Օ՛,
Աստված... Մի լար Գիւլիգար, մի լար այս
շների մօտ. Մի՞թէ Գրգօի կին Գիւլիգարը
պիտի վախենայ: (Գօտկից հանելով զանակը
և տալով Գիւլիգարին). Առ ահա սիրելիս,
պաշտպանվենք. կամ պատվով ապրենք, կամ
մեռնենք: (Գուրգուրելով). Օ՛, Գիւլիգար,
սիրաս կառավում է քեզ համար, բայց
ճար չկայ:

ՍԼՕ. (Քիչ մօտենալով). Ճար չը կայ,
անձնատուր եղիր, տուր սուրդ:

ԳՐԳՕ. Մի մօտենար, Գրգօի սուրը
զժվար է առնել: (Ուրը բարձրացնելով).
Հեռն, մի մօտենար:

ՍԼՕ. (Յեռ քաշվելով, կրքոտ). Համար-
ձակվում ես, կամակոր հայ, լնվ: Ձինւոր-
ներ, կրակեցէք, միայն խնայեցէք հարսին:
(Ձինվորները հրացանները ուղղում են, մի
բանի հրացան արաքվում են, զանազան բա-
ցականչութիւններով ընկնում են թափազլոր
Մինաս քէհան և միւս տղերքը. Գրգօն սու-
րը շարժելով շարժում է անում յարձակվելու,
բայց թուլացած, վիրավոր, տարուբերվում
է և ընկնում է Գիւլիգարի մօտ, ժայռի բե-
կորի վերայ: Գիւլիգարը վախեցած մօտ է

վազում և զրկում):

ԳՐԳՕ. Օ՛, Գիւլիգար, մեռնում եմ...
(Շրթունքները մօտեցնելով). Մի համբոյր...
վերջին համբոյր... (Համբուրվում են) Ո՛ր-
քան քաղցր է... շատ քաղցր... օ, մարդիկ...
օ, երկինք...

ԳԻԻԼԻԶԱՐ. (Հացախառն.) Գրգօ, Գրգօ,
հողիս, բաց աչքերդ... Ա՛խ Աստված... Գրը-
գօ... իմ սէր... իմ հրեշտակ... Գրգօ..., օ,
Սլօ, Սլօ, ինձ ինչո՞ւ խնայեցիր, մի՞թէ Գրը-
գօից յետոյ կեանքը ինձ համար զին ունէ:

ԳՐԳՕ. (Նֆոցով, գժվարութեամբ շրա-
կվելով). Գիւլիգար, հողիս, թող ինձ, հե-
ռացիր, փրկիր կեանքդ... բայց... ոչ, սիրե-
լիս... չարժէ ապրել... մի՞թէ սա կեանք է...
զժնիք է, գժնիք... (Նորից ընկնելով Գիւ-
լիգարի թևերի մէջ, Գիւլիգարը Գրգօի ե-
րեսը ծածկում է համբոյրներով). Ա՛նուշ
Գիւլիգար... պաք... պաք... որ կշտանամ...
բայց... օ, գազան մարդիկ... մեռնում եմ...
Հրայր... ո՞ւր ես... Գիւլիգար, անուշ Գիւլի-
գար... (Մեռնում է, Գիւլիգարը թողնելով,
Գրգօի կոնակը հանգչեցնում է ժայռի բե-
կորի յետևի պատին և չորում է մօտը):

ԳԻԻԼԻԶԱՐ. Օ՛, Աստված, մի՞թէ սա

քո ստեղծած աշխարհն է, միթէ սպ-
րում ենք մարդկանց մէջ... Գծոխք է, դը-
ծոխք մեր կեանքը... (Հաց է լինում). Գրգօ,
Գրգօ, ի՞նչ փափագով սպասում էի իմ
պսակի օրին, ինչպէս գուրգուրում էի քո
յիշատակը, օրերը ինձ տարի էին թվում,
վերջապէս եկար, եկար, բայց վայ ինձ,
ի՞նչ օրի գոայ քեզ, խեղճ, թշվառ, իմ ա-
զիզ Գրգօ... (Հաց է լինում և ընկնում դիւ
վերայ):

ՍԼՕ. (Մօտենալով և թևից մեղմու-
թեամբ բռնելով). Սիրուն Գիւլիգար, լսվ,
բավական է, վերջ տուր, գնանք հանգրա-
տացիր...

ԳԻԻԼԻԶԱՐ. (Վեր թռչելով, զրգոված,
զանակը ձեռին). Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից...
գազան, անխիղճ, անօրէն շուն, հեռո՛ւ...
Միթէ Գրգօի դին էլ շատ ես տեսնում...

ՍԼՕ. (Հէգնական ժպտով). Հէյ, սիրուն
աղջիկ, Գրգօդ էլ չկայ, դէ հիմայ ես կամ,
ի՞նչ է, ինձ չես հավանում: (Թևից բռ-
նում է):

ԳԻԻԼԻԶԱՐ. (Կրքոտ թևը ազատելով և
զանակը Սլօի կուրծքը խրելով). Մեռիր
լիրբ, թէև Գիւլիգարը կին է, թո՛յլ, անգօր,

բայց այսպիսի դժոխային պայմանները թո-
թով մանուկին էլ ուժ կտան, որ թափէ
քեզ պէս անօրէն գազանի արիւնը... (Սլօն
տարուբերվում է և ընկնում. զինվորները
խառնվում են իրար). Մօտեցէք, դուք էլ մօ-
տեցէք, Գրգօն մեռավ, բայց նրա պատիվը
Գիւլիգարը կպաշտպանէ... Օ՛, այլևս չկայ
կանանցի վախկոտութիւն, թուլութիւն, ե-
թէ դանակն էլ չլինէր, ասամներով կկրա-
րէի, կբզկատէի... Գծոխքը ծնեցնում է դժո-
խային հակումներ... Ի՞նչ էիք ուզում մե-
զանից, մենք ձեզ ի՞նչ էինք արել, ինչո՞ւ
այրեցիք մեր գիւղը, ինչո՞ւ մորթում էք
մեր հայրերին, մեր եղբայրներին, ինչո՞ւ...
ինչո՞ւ սպանեցիք այս ջիվան... (Տնկնկում է)
այս թառլան Գրգօին... ինչո՞ւ...

ՄԻ ԶԻՆՎՈՐ. Հերիք է քած, զցիր
զանակդ:

ԳԻԻԼԻԶԱՐ. Ի՞նչ... օ, արիւն թափել
դո՛ւք սովորեցրիք, սրանից յետոյ զանակը
ինձ համար ամենասուրբ գործիքն է. էլ
ի՞նչ ափսոսանք, ի՞նչ խիղճ, երբ չեն ափ-
սոսում, չեն խղճում մեզ... Դանակ, այժմ
մարդկանց պաշտամունքը դա պէտք է լի-
նի... (Մի քանի զինվոր մօտենում են). Հե-

սուն, չեմ թող տայ, որ այս սրբութեան մօտենայ: (Յոյց է տալիս Գրգօին: Լավում է հրացանի ձայներ, զիւրը շարունակվում է վառվել, աղաղակները մօտենում են):

ՄԻ ԹԻԻՐԲ ԶԻՆՎՈՐ. (Յերս վազելով).
Ընկերներ, փախէք, Հրայրը իր ընկերներով վրայ հասավ, մեր ընկերներից շատերը ընկան, մի մասն էլ փախավ: Հրայրը այս կողմն է գալիս... (Փախչում է հակառակ կողմը):

ՄԻ ԶԻՆՎՈՐ. Հրայրը... (Ինչիզարին).
Ուրեմն դուն էլ մեռիր քած... (Հրացանը արձակում է, Գիւլիզարը վիրավոր ընկնում է, զինվորները փախչում են):

ԳԻԻԼԻԶԱՐ. (Կուրծքը ընկած շտկվելով).
Գրգօ, իմ սէր, Գիւլիզարդ էլ շանթահար թավալվում է արեան մէջ... Օ, գնդակի ցավը ինձ համար ոչինչ, իմ սիրտը կրկնում է, իմ հոգին տանջվում, որ դու ընկար, դու, իմ Գրգօ... Բայց շնորհակալ եմ Աստվածանից, մի գնդակ էլ ուզարկեց ինձ համար... Օ, ինչ լավ է իրար հետ մեռնել... (Շոյելով Գրգօի մազերը). Ինչ սիրուն ճակատ, (համըռնելով). ինչ գողարիկ խոզոպներ... բայց ավնդ, սառն է,

սառն... քիչ յետոյ և ես կսառչեմ... (համըռնելով). Գրգօ, իմ սէր, իմ գզգիած, իմ գուրգուրած վարդ, Գիւլիզարդ էլ շուտով կմիանայ քեզ... Օ, ինչո՞ւ այդքան անտարբեր է երկինքը... ո՞ւր է արդարութիւնը... ո՞ւր է անեղ Աստուծոյ շանթերը... ա՛, չեմ տեսնում, գու՛ր է, գու՛ր բոլորը... թող այստեղ մի ամբողջ զիւղ քանդվի, թող այստեղ վիրավոր հայրերը թավալվեն իրենց որդիերանց արեան մէջ, թող սնմուրաց նոր հարսը լվայ ձեռները իր փայփայած նշանածի արիւնով, իսկ երկինքը լու՛է, իսկ մարդիկ միայն արցունք թափեն... (Թուլացած.) Արդէն թուլանում եմ, Գրգօ, ես էլ եմ գալիս դէպի քեզ... ընդունիր... վերջին համբոյրս... (Կամայու՛կ զլուխը իջեցնում է Գրգօի երեսի վերայ, շրթունքները դնում նրա շրթունքներին և մեռնում: Մարդկանց ձայներ, շտապ-շտապ ներս են գալիս Հրայրը, Մքէն, Սրքէն և ընկերները ջահերով):

Տ Ե Ս Ի Լ 7.

**ՆՈՅՆՔ, ՀՐԱՅՐ, ՄՔԷ, ՍՐՔԷ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐ
ՀՐԱՅՐ.** Ասում են նրանց այո, հրա-

պարակուսն են շրջապատել:

ՄԲԷ. Երեւի Գրգօին սպանած, իսկ Գիւլիզարին էլ տարած կլինեն:

ՀՐԱՅՐ. Օ, այստեղ ինչ գիտկներ շատ կան: Լնյս, լոյս այս կողմը. (Ջահերը մօտենում են). Ա, դժոխք, տհա հարսն ու փեսան, անա ջիվան Գրգօն և սիրուն Գիւլիզարը, որոնք իրար գրկած արձակել են իրենց վերջին շունչը:

ՄԲԷ. (Եսայելով սփսոսանքով). Խեղճեր...

ՍՐԲԷ. (Սփրտնած). Գիւլիզարն էլ...

ՀՐԱՅՐ. Սրանից յետոյ էլ ի խնայենք, սրանից յետոյ էլ Հրայրի սրտում խղճի, ավսոսանքի, գթի կտոր կմնայ, ասան, Մքէ, տան, սա տանելի է...

ՄԲԷ. Քստմենելի է, քստմենելի:

ՍՐԲԷ. (Հեկեկալով և չոքելով Գիւլիզարի ու Գրգօի առաջ). Ներեցէք, ներեցէք ինձ անմեղ գոհեր. ես էի պատճառը, որ Հրայրը, Մքէն և ընկերներդ այստեղ չէին, ես մեղավոր եմ, մեղավոր. օ, ինչ զարհուրելի բան է...

ՄԲԷ. Լավ, Սրքէ, թող Աստված սիրես, դու ինչ մեղավոր ես, սխալ էիր իմացել,

խսկոյն սխալդ հասկացել ես և ուզղել, ինչ արած, որ ուշ էր, աշխարհ է, կլինի: Երեւի շուն Սլօն նպատակով լուր էր տարածել, որպէսզի մեզ մոլորեցնէ, իսկ ինքը եկել է այստեղ: Խաղ էր, որը և յաջողեցրեց:

ՀՐԱՅՐ. (Գուրզուրելով Սրքէին). Վեր կաց, վեր, դու ինչ մեղավոր ես, սա Գրգօի համար թակարդ էր, լարողը լարեց և նպատակին հասավ:

ՍՐԲԷ. (Վեր կենալով). Ո՛չ, ո՛չ, մեղավոր եմ, դուք չգիտէք...

ՀՐԱՅՐ. (Յետեղ նայելով եւ Սլօն դին տեսնելով). Ա, շուն, գուն էլ ես ընկել, գիտեմ որ Գրգօն առանց վրէժ լուծելու չի մեռնի... (Ոտով հրելով). Ահա Սլօ բէկը:

ՄԲԷ. (Թքելով). Թիւ, լիրբ, արիւնարբու գազան:

ՀՐԱՅՐ. Վերցրէք, վերցրէք Գրգօին, Գիւլիզարին և աղերանցը սուսն տանենք, էլ ճար չկայ, եղածը եղել է... (Ընկերները վերցնում են, Հրայրը համբուրում է Գրգօի ճակատը). Ընդունիր համբոյրս, սիրելի ընկեր. Հրայրը գեռ կանգանի է, կը լուծէ վրէժդ: (Բոլորը զնում են).

Վ Ա Ր Ա Կ Ո Յ Ր

Վերջ երկրորդ գործողութեան

ԵՐԲՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Տեսարանը ներկայացնում է կործանված գիւղի հրապարակ, ծխացող ավերակներ, խառնի խուռն թափված գերաններ, քարեր, սայլերի, գիւղական այլ և այլ գործիքների բեկորներ: Դիրքը նույնն է ինչ որ երկրորդ գործողութեան ժամանակ, միայն գործողութեան տեղը փոխվում է գիւղի մի ուրիշ մասում: Բեմի խորքում երևում է գիւղական եկեղեցի, որի պարսպի գուռը բացվում է գէղի բեմը):

Տ Ե Ս Ի Լ 1.

ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ԵՐԿՈՒ ԳԻՒՂԱՅԻ ԲԱՆ-
ՎՈՐՆԵՐ.

(Քահանան հրացանը ձեռին, փամփուշանե-
րը կրծքին, ղեկավարում է աշխատանքը,
խակ բանվորները բանով և բրջով փորում
են ավերակները, գիերը և ինչքը հանելու
համար):

I ԲԱՆՎՈՐ. (Փորելով ևւ նըզելով).

«Փուս ու գուման է Սասուն»,

«Մուխ պատէ Անդրբայ գլխուն»,

«Սարի վեր արիւն վազէ»,

«Մեր արտ, արօտ կարմիր ներկէ»:

«Վայ մեր օրին, գուլում, գուլում,
գուլում»...:

Է՛հ, թիւ, սա էլ կեանք է, սա էլ ապրուստ
է, ավելի լավ չէ մեռնենք: (Դառնութեամբ
շաշունակում է փորել):

ՔԱՀԱՆԱՅ. Որգի, համբերող եղիր, այս
պատուհանները որ կայ Աստվածանից է,
նա մեզ փորձում է: Միթէ չգիտես Յոբ
երանելու պատմութիւնը. չէ որ Աստված
ամեն տեսակ պատուհաններ թափեց նրա
գլխին, նա չը յուսահատվեց և վերջը դար-
ձեալ տիրացավ իր փառքին... Աստված եր-
կայնամիտ է:

I ԲԱՆՎՈՐ. (Կրքոտ սրիչը խփելով).

Է՛հ, չգիտեմ...

II ԲԱՆՎՈՐ. (Փորելը դադարեցնելով).

Համբերել, համբերել, չգիտեմ մինչև երբ...
Սա ինչ բան է, օր ու գիշեր աշխատենք,
արիւն քրտինք թափենք, գարունը գելի ու
անձրևի, ձմեռը բուք ու բորանի հետ ճան-
կապենք, օրնի բուն ուսերս ու կոնակներս
բեռի տակ ճարձառէ, արևը խորովէ, ամեն
հարկ ու խարճը, կոռն ու բեկարը կրենք,
հոգևոր և մարմնաւոր մեծավորների ոտներն

ու փէշերը լիզենք և էլ ո՞ր մէկն ասեմ,
վերջն էլ մեր օրն այս է հա՛... (Կատաղի)。
Ա՛, կթքեմ կեանքի էլ, ամեն ինչու վերայ
էլ: (Յուզված շարունակում է աշխատել):

ՔԱՀ. Տղա, Սահակ, մի մեղանչէ, ինչ
արած, վիշտ ու տանջանքը մտրդու հա-
մար է:

I ԲԱՆՎՈՐ. Տէր հայր, միւս աշխարհն
էլ մեր գործը այս պիտի լինի, այնտեղ էլ
մենք պիտի տանջվենք: Է՛հ, այս աշխարհից
բան չհասկացանք:

II ԲԱՆՎՈՐ. Հողը մեր գլխին, այստեղ
մեզ համար դժոխք է, այնտեղ չգիտեմ:

ՔԱՀ. Այնտեղ մեծ ու փոքր չկայ,
այնտեղ հարուստ, աղքատ, ազնվական, ու-
միկ, բոլորը, բոլորը հավասար են, այնտեղ
ամեն մարդ իր գործի համեմատ կը վար-
ձատրվի:

I ԲԱՆՎՈՐ. Տէր հայր, փողի ու գօռի
բան չէ՛... Ինչքան էլ ուզում է մեղավոր
լինի մարդս, ոսկին շաղ կտայ և ամբողջ
մարդկութիւնը բերենքսի վեր կընկնեն Աս-
տուծոյ առաջ և կքավեն մեղավորի յան-
ցանքները... Տէր հայր, երկինքը մինչև ան-
գամ հարստի, գօրեղի կողմն է... Հարստի

բանը հեշտ է, վնյ անճար աղքատին...

ՔԱՀ. Որդիք, էլի կրկնում եմ, միք
մեղանչէ, Աստուծոյ առաջ բոլորդ հավա-
սար էք:

I ԲԱՆՎՈՐ. Հավասար ենք... Ես չեմ
տեսնում հավասարութիւն:

II ԲԱՆՎՈՐ. (Դառնում/ծեամը ժպտոյով)。
Վերջում, գերեզմանում. ի հարկէ որ, հինգ
արշին կտավ, երեք արշին գետին: Հէյ,
ձիւնը մեր գլխին:

I ԲԱՆՎՈՐ. (Փորելը դադարեցնելով և
մի կողմը զցելով գերանը). Վնյ, խեղճ,
նաչար Մխօ քէհայ, ա՛յս էր քո օրը, սրա
համար քառասուն տարի արիւն քրտինք
թափեցիր, տունդ շէնցրէր, հարիւրավոր
աղքատների կերակրեցիր, շուն ու գելի բե-
րան փակեցիր, աղջիկդ, խորոտիկ Գիւլի-
գարգ հասցրիր, բուսցրիր և վերջը այս օ-
րին մնացիր... Թշվառ մարդ... (Կատաղի)։ Տէր
հայր, տէր հայր, Աստուծոյ սիրուն, ասա՛,
ասա՛, այս է հավասարութիւնը... (Կատաղի
մի կողմն է զցում ձեռի բայր, նստում է
ձեռների մէջ բռնելով գլուխը և մտածելով):

II ԲԱՆՎՈՐ. (Մօտենալով և նայելով
փոսը, յետոյ չոքելով և համբուրելով)։ Ա՛խ,

Միօ քէհայ, կուրանար աչքերս, խլանար
 ախանջս... այդ ի՛նչ օրի ես... (Դէպի երկիրնք
 բռունցքը բարձրացնելով). Չեմ հավատայ,
 եթէ կրակ չթափես, եթէ չոչնչացնես. սուտ
 է, սուտ է բոլորը, եթէ աշխարհը չկործան-
 վի.. (Տխուր նստում է մի կողմը. ձեռը
 ծնօտին):

ՔԱՀ. (Մուսյ, մօտենալով փոսին, աչ-
 քերը սրբելով, լացոտ ձայնով). Միք ասէ
 որդիք, միք... (Կամաց մտքի մէջ ողորմես-
 ցի է ասում և խաշակնքում). Վերցրէք,
 վերցրէք տանենք եկեղեցի... (Բանվորները
 դին դնում են պատգարակի վերայ. քահա-
 նան աչքերն է սրբում). Ինչ ասեմ որդիք,
 մարդ ահամայից մեղանչում է, միթէ այս
 հրացանը, այս փամփուշաները քահանայի
 վայել է. միթէ Քրիստոսի փոխանորդը, բե-
 մից խաղաղութիւն կանչողը, ինքը պիտի
 մահ սփռէ չորս կողմը, բայց կարիքը ստի-
 պում է... է, կեանք չէ, չէ, դժոխք է,
 դժոխք... (Աչքերը սրբելով). Վեր կացէք
 որդիք, վեր կացէք, հիմա էլ գնանք Չա-
 քէին սրտենք. իսկզձ, թշվառ Միօ, երեք
 ի՛նչ, այսօր ի՛նչ...

1 ԲԱՆՎՈՐ. (Վեր կենալով և բահը

զցելով կրքոտ). Տէր հայր, էլ մեզ համար
 ամեն ինչ վերջացավ, եթէ մեր տունը
 քանդված է, թող քանդվի աշխարհը. (Բռու-
 նելով հրացանը). ա՛յ սրանից յետոյ իմ խա-
 ջը: (Բռնում է պատգարակի մի կողմից):

II ԲԱՆՎՈՐ. (Բռնելով պատգարակի միւս
 կողմից): Թիւ, անիծված լինի կեանքն էլ
 ու ամեն բան էլ: (Մտնում են եկեղեցու
 բակը):

Տ Ա Ս Ի 2.

ՍՐՔԷ ՄԻԱՅՆԱԿ.

ՍՐՔԷ. (Ծերս մտնելով, մուսյ, շվար).
 Ինչ անտանելի է կեանքը, ամեն տեղ ուր-
 վականներ, ամեն տեղ իբրև մահու զրօշ-
 ներ անկված են իմ աչքերի առաջ Գրգօն,
 Գիւլիգարը, Մինաս քէհան, բոլորը, բոլորը
 և իրենց արիւնստ ձեռները, սարսուղնոյ
 հայեացքը ինձ անկած, հաշիւ են պահան-
 ջում... (Չարհուրած ցոյց տալով փոսը). իսկ
 սա Միօ քէհայի գերեզմանն է, Միօի:
 (Չեանքով երեսը բռնելով). Ա, թշվառ
 Սրքէ, ի՛նչ արիւր... Քո սեփական ձեռներով

քո տունը քանդեցիր, քո սեփական ձեռներով եղբայրներդ խեղդեցիր և նրանց արեան մէջ լողացիր... (Զարհուրած ցոյց տալով ավերակների բեկորները). Տես, տես խանձված գերանները, թրծված քարերն անգամ նզովում են ինձ, անիծում... (Հանելով դանակը). Օ, ինձ այլևս պէտք չէ այս կեանքը, թող թափվի վատի արիւնը, որպէսզի գերեզմանում հանգստանան անմեղ զոհերը... (Դանակը բարձրացնում է, յանկարծ շարժելով մի կողմը). Ո՛չ, ո՛չ, իմ գերեզմանը յավիտենական թքի, մրի բաժին կդառնայ, յավիտենական կնզովեն իմ յիշատակը մեր յաջորդները, ո՛չ, պէտք է ապրել և քավել այս մեղքերը, պէտք է սրբել, մաքրել իմ անվան ժանգը և փառավոր մահով մեռնել... Սրանից յետոյ աշխարհից ձեռք քաշած, մոռացած ամեն ինչ, ինչ որ թշնամուն է... Ամբողջ էութեամբ ծառայել թշվառին, որբին, ընկածին, վիրավորին. դիւրզացնել աշխարհը անպատմելի յանդգնութեամբ, իբր խելառ զրոհ տալ, բաղխվել բանականների հետ, կամ կտոր-կտոր ընկնել, կամ թէ չէ թշնամուց խլված զրօշակների տակ մեռնել ու ապա թողնել այս

գոփաքը... Ինքնասպանութիւնը միևնոյն է, այսպէս թէ այնպէս, այսպէս իբր մատնիչ, թուլամորթ, սնքօր մէկը կընկնեմ, իսկ այնպէս պարտքս կատարած, պատիվս փրկած, իբրև հերոս կ'մեռնեմ... Հրայր, եղբայր, գիտեմ, այն ժամանակ կներես... (Շտապով դուրս է գնում):

Տ ե ս ի լ Յ.

ՀՐԱՅՐ ԵՒ ՄՔԷ.

ՀՐԱՅՐ. (Մքէի հետ ներս մտնելով, տխուր). Չգիտեմ ինչու, միայն զրութիւնս սարսափելի է. շատ էի տեսել ավերակ գիւղեր, մորթոտված թշվառներ. շատ էի լսել աղեկաւոր հեծեծանքներ, քայց այսպէս ինձ վերայ վատ չէր ազդէ, սիրտս դառն է, հոգիս տխուր:

ՄՔԷ. Հրայր, մի՞թէ առաջին անգամն է, չէ՞ որ ծնվածդ օրից ահանատես ես եղել զրկանքի, թալանի, կոտորածի: Չէ՞ որ երբ երեխայ էինք, հեռու դպրոցում իրար հետ ծանօթացանք, իրար հետ եղբայրացանք և հէնց այնտեղ, զեռ մանուկ ինձ

պատմել ես այս արհավիրքների մասին: Օ՛, ինչպէս քո աչքերը բոցավառվում էին, ինչպէս անհանգիստ էիր, մոռացած ամեն ինչ՝ դասեր, ուսուցիչ, պարտականութիւն, միշտ հոգով թռչում էիր այս արիւնլիվայ վայրերը, միշտ տենչում էին օգնելու հարստահարվածին, ճնշվածին, թշվառին և այդ էր պատճառը, որ ես էլ համակված այդ մըտքից, դեռ ուսումնարանը չվերջացրած, հինգերորդ դասարանից փախուստ ավիրք և եկանք այս վայրերը, այս արցունքի և արեան ծովը... Քանի, քանի այսպիսի քստմեցնող տեսարանների ենք ականատես եղել, քանի այրվող, կործանվող գիւղեր ենք տեսել, ի հարկէ, մեր սիրտը մղկացել է, մեր հոգին տոչորվել, բայց արիութիւններս չենք կորցրել, ճար ենք արել վէրքին, որքան որ կարողացել ենք: Այժմս էլ ի՛նչ եղավ քեզ, թնո՞ղ մտածմունքդ, ինչո՞ւ այդքան տանջում ես դու քեզ:

ՀՐԱՅՐ. Չգիտեմ ինչու, բայց հոգեպէս ընկճված եմ, տիրութիւնը ինձ խեղդում է: (Մտածմունքի մէջ, դառնալով Մքէին). Չես տեսել այսօր Սրբէին:

ՄՔԷ. Ոչ, ինչո՞ւ ես հարցնում:

ՀՐԱՅՐ. Մքէ, իբր դու իմ եղբայրը, իբր ամենամօտ ընկերս, ես քեզ մի խոստովանութիւն պէտք է անեմ: Ես կասկածում եմ, որ Սրբէն Սլօի արշավանքի հետ կապ ունէ. նրա շարժումը, նրա հայեացքը, նրա խօսքերը ցոյց են տալիս, որ նա ինքը իրան մեղավոր է զգում: Եւ հէնց ինձ էլ այդ մտատանջութիւնն է խեղդում:

ՄՔԷ. Հրայր, հեռու վանիք այդ մըտքերը քեզանից: Սրբէն, Հրայրի եղբայրը և այդպիսի բան: Ո՛չ, ո՛չ, եթէ մինչև անգամ աչքով տեսնես, մի հավատար:

ՀՐԱՅՐ. Բայց նրա կեղծ լուրը, որի պատճառով մենք հեռացանք, այս յանկարծակի յարձակումը, նրա լուրը, անկապ խօսքերը, մռայլ դէմքը, բոլորը, բոլորը ցոյց են տալիս, որ մի բան կայ:

ՄՔԷ. Ոչինչ չկայ, նրան տանջում է այն, որ սխալ հասկանալով կամ խաբվելով մեզ մտորեցրեց, մենք հեռացանք, այս պատուհասը եկավ զիւղի զլիւին և այդ բանի համար ինքը իրան մեղավոր զգալով— տանջվում է: Նա ի՛նչ մեղավոր է, լավութիւն էր ուզում անել, բարութեան տեղ չարութիւն դուրս եկավ:

ՀՐԱՅՐ. Գուցէ, բայց կասկածը իմ սրտից դուրս չի գալիս:

ՄԲԷ. Թող այդ միտքը, հեռու վանիք քեզանից, Սրբէն ինչպէս բիւրեղ մաքուր է, դու այն ասա, ինչ անենք թիւրք զերինների հետ, մենք այստեղ չենք կարող մնալ, պէտք է ժողովրդին հավաքել և քաշվել լեռները, իսկ այդ թիւրք զինվորները մեր բեռ կլինեն:

ՀՐԱՅՐ. (Մտածմունքի մէջ). Ինչ անել չգիտեմ. Մքէ ինչպէս ուզում ես, այնպէս վարվիր, այսօր ես կորցրել եմ դատելու ընդունակութիւնս:

ՄԲԷ. Լավ, ցտեսութիւն, ես կգնամ, մի կերպ կկարգադրեմ, իսկ քեզանից խընդրում եմ, որ մտանաս բոլորը և հանգիստ կերպով մտածես մեր անելիքի մասին:

ՀՐԱՅՐ. Կարծեմ գերինների մէջ կայ և մի սպայ:

ՄԲԷ. Այո:

ՀՐԱՅՐ. Խնդրում եմ այդ սպային բեր մօտս, մի քանի հարց ունիմ տալու:

ՄԲԷ. Շատ լավ:

(Գնում է):

Տ և ս ի լ 4.

ՀՐԱՅՐ ՄԻԱՅՆՆԷ

ՀՐԱՅՐ. Պէտք է իմանալ, պէտք է այդ հարցը պարզել, որ Սրբէն մեզանչէլ է, այն ժամանակ, ճ, Հրայր, եթէ խիստ կերպով վրէժխնդիր ես գէպի ուրիշը, վրէժխնդիր եղիր և գէպի քեզ... Միթէ եզբայրական պաշտականութիւնը, արիւնը, սէրը, գուրգուրանքը առաջը պիտի առնեն արդար ցասման, ոչ, կպատահեմ վատի սիրտը, եթէ մինչև անգամ վրնի իմ սեփականը... (Մտածում է, յանկարծ ցնցվելով, վարսնոտ, ձեռով ճակատը ըննելով). Սրբէ, Սրբէ, միթէ դու ընդունակ ես, միթէ իմ կրտսեր եզբայրս, իմ գուրգուրած, իմ վայփայած սէրս, իմ միակ սէրս այս աշխարհում, ընդունակ կլինի այդ քայլը անելու... Ո՛չ, չեմ հավատայ... Սրբէն, իմ սիրական եզբայրը այդ բանը չի անի... Բայց եթէ ճիշտ է... Օ, այն ժամանակ հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից մայր, եղբայր, արիւն: Այն ժամանակ կփայփայեմ, կգուրգուրեմ իմ զանակով, այն ժամանակ թող իմ սիրատենչ

խօսքերի փոխան, իմ դանակը փարվի նրա սրտին... Ա՛, ինչ անեմ, ինչ, զարհուրելի է, մի կողմը սիրելի եղբայր, անմխիթար մայր, իսկ միւս կողմը պատիվ... (Յուզած նստում է ժայռի ընկորի վերայ, թիկն տալիս, գլուխը ձեռների մէջ):

Տ Ա Ս Ի Լ Ծ.

ՀՐԱՅՐ ԵՒ ԶԱՐԴԱՐ.

ԶԱՐԴԱՐ. (Խելահորոյս, կատաղի հալեացքով, շտապ շտապ ներս մտնելով և փարվելով շրայրին): Գրգօ, անուշ Գրգօ, ո՞ւր ես փախել, հարսանիքդ բռնել ենք, տղերքը պար են թռչում, դու այտեղ ինչ ես անցւած... (Հրայրը երեսը քարծրացնում է. Զարդարը յետ քաշվելով, ակտուր մղկտոցով). Գրգօս չե՞ս, շրայր դո՞ւ ես, ո՞ւր է Գրգօս...

ՀՐԱՅՐ. (Վեր կենալով, փղձկված, Զարդարի ձեռները համբուրելով). Ա՛խ, մայրիկ, ինչ օրի ես, նստիր, նստիր, Գրգօդ կգայ, Գրգօդ, օ, Աստված...

ԶԱՐԴԱՐ. Զէ, չէ, շրայր ջան, գնամ

մեր տանը հարսանիք է, Գրգօս պատկվում է, սիրուն է Գիւլիգարս, երկունս էլ սիրուն են. երբ երեկ հարսնաուր եկեղեցի գնաց, Գրգօս ու Գիւլիգարս կարծես հրեշտակներ էին, սիրուն, մատուց, բոյով, բուսով... (Շվար շուրջը նայելով). Բայց, ո՞ւր է Գրգօս, ո՞ւր է Գիւլիգարը, շրայր, շատ ուշացան, հիւրերը մեղք են... շրայր, ո՞ւր է Գրգօս...

ՀՐԱՅՐ. (Յուզված). Ուր է Գրգօդ... (Մի կողմը). Ա՛, թշվառ կին, ինչ ասեմ, ինչ պատասխանեմ, թէեւ խելառ, բայց շատ խելօք հարց է տալիս... Ո՞ւր է խեղճի ջիվան Գրգօն: (Երան). Մայրիկ, Գրգօն կգայ, հանգիստ պահիր սիրտդ, Գրգօն կգայ:

ԶԱՐԴԱՐ. Յ՛, շրայր, ինչ դժվար է մայր լինել, հարսնաուր քիչ ուշանում է, սիրտս թաթուում է... Պար պիտի խաղամ Գրգօխ առաջ, նրա հոգուն մեռնեմ, անուշ է, շատ անուշ... Ո՞ւր է Գրգօս, շրայր, ինչո՞ւ չի երևում երեկվանից են գնացել... Ո՞ւր է Գիւլիգարը:

ՀՐԱՅՐ. Մայրիկ, ես քեզ Գրգօ, ինչո՞ւ ես այդքան շտապում. (Չորելով առաջը, ձեռները

համբուրելով). Սրանից յետոյ ինձ էլ Գրք-
գօից պէս սիրիք, Գրգօց էլ կգայ, մի մը-
տածիք:

ՁՍՐԴՍՐ. (Համբուրելով Հրայրի ծա-
կաւը). Գուն էլ իմ սրգին ես, բայց Գրգօն
ուրիշ, նա անուշ է, շատ անսուշ... (Տխուր
ըողանջում է եկեղեցու զանգը):

ՀՐԱՅՐ. (Վեր թռչելով). Ա՛, Գրգօին և
Գիւլիգարին են տանում, ինչ պիտի անէ
այս թշվառը: (Զանգը տխուր ըողանջում է).
Մայրիկ, վեր կաց գնանք տուն, հիւրերը
սպասում են:

ՁՍՐԴՍՐ. (Վեր կենայով). Ո՛չ, ո՛չ, չը-
րո՛յր, չէս լսում գանգի ձայնը, իմաց են
տալիս, որ հարսնաւոր գալիս է, մնանք այս-
տեղ մտիկ տանք ջիվան Գրգօիս. կաց չը-
րայր, չէ՞ որ Գրգօիս եղբայրն էս:

ՀՐԱՅՐ. Մայրիկ, գնանք այստեղից ձեր
տան գուռը սպասենք, այստեղ լավ չէ,
տան տիրուհին հիւրերի մօտ պէտք է լի-
նի, նրանք կսպասեն: (Զանգը շարունակ
տխուր ըողանջում է):

ՁՍՐԴՍՐ. Չէ, չէ, չըրո՛յր, ո՛վ գիտէ,
կարելի է Գրգօս էլի ուշացավ, էլի տուն

չեկավ, ես այստեղ կմնամ և գօռով տուն
կտանեմ:

ՀՐԱՅՐ. (Մորմոք). Խեղճ, թշվառ կին:
Ա՛խ, ինչ անեմ, ինչ...

Տ և ս ի լ Ե.

ՆՈՅՆՔ, ՔԱՀԱՆԱՆ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՎՈՐՆԵՐ

(Բացվում է եկեղեցու պարսպի գուները:
զանգը շարունակ մեղմ ըողանջում է, երե-
վում են ախրացու տղայքը, որոնք երգում
են սրտառուշ մեղեդի, նրանցից յետոյ շուր-
ջաւոր վերան, ձեռին խաչը քահանան. դրա-
նից յետոյ ոտից ցզլուխ գինված Հրայրի
ընկերները, որոնք ուսերի վերայ կրում են
Գրգօի և Գիւլիգարի պատգարակը: Պատգա-
րակի վերայ իրենց հագուստներով իրար
կողքի դրված են Գրգօի և Գիւլիգարի դիե-
րը, զարգարված ծաղիկներով. յուզարկավո-
րութիւնը յառաջանում է դէպի բեմը, յե-
տոյ ծովում դէպի աջ: Հրայրը դիմում է
դէպի պատգարակը):

ՁՍՐԴՍՐ. (Դէպի քահանան վազելով,
աղիտղորմ ձիչով). Տէրտէր, տէրտէր, ո՛ւր,

նւր էք տանում Գրգօիս ու հարսիս, անա
տան ճանապարհը... Տէրտէր ծերացել ես...
(Մօտենում է պատգարակին, քոլորը ստուած
կանգ են առնում, շատերը յուզված հեկե-
կում են, քահանան աչքերն է սրբում, քոլո-
րը քարացած են):

ՀՐԱՅՐ. Ա՛, երկինք, տանելի՛ է այս...

ԶԱՐԴԱՐ. (Շփարված չորս կողմը նա-
յելով). Ինչո՞ւ են լաց լինում... (Մառն մտիկ
տալով Գրգօի ընկերներին, յետոյ յուզ-
ված). Ձէք ամաչում աղերք, հարսանիքին
լաց կլինեն: Վայր դրէք. վայր, Գրգօիս...

ՔԱՀԱՆԱՅ. Տղերք, մի քանիսդ բռնե-
ցէք այդ խեղճին, մենք շարունակենք յու-
ղարկավորութիւնը: (Մի քանիսը ուզում են
Զարգարի թևերը ընկնել):

ԶԱՐԴԱՐ. (Աղիողորմ՝). Հեռու, հեռու,
թողէ՛ք ինձ... (Ձեռները դէպի պատգարակը
մեկնելով). Գրգօիս ինձ ավէ՛ք, ինձ...

ՀՐԱՅՐ. (Տղերք, իջեցրէք պատգարա-
կը, թող կարօտը առնէ այս թշվառը: (Տը-
ղերքը պատգարակը դնում են գետին, բո-
լորը շրջապատում են, քարացած, լուռ):

ԶԱՐԴԱՐ. (Նախ պաղ-պաղ նայելով
դիերին, յետոյ խելառ ժպտով). Հը՛... քնել

են... (Ձեռով խփելով Գրգօին). Բալաս, Կրք-
գօս, ի՞նչ քնելու ժամանակ է, վեր կաց,
այսօր պսակիդ օրն է, կանաչ նարօս պի-
տի կապեն, այսօր Գիւլիգարիդ հետ յաւի-
տեան պիտ կապվես. Կրգօ, Կրգօ, վեր
կաց... (Հրելով Գիւլիգարին). Գիւլիգար,
Գիւլիգար, ինչ կասեն մարդիկ, ամօթ է
քան, վեր կաց... (Յանկարծ տեսնելով Կրք-
գօի կրծքի վերքը). Արի՛ւն, Կրքօիս կուրծ-
քը արիւնոտ: (Աղիողորմ, սուր ճչով, կա-
տաղի շուրջը նայելով). Ա՛, սպանել են
բալախ, սպանել... Կրգօս, Կրգօս... (Հեծ-
կատում է, մի քանիսը բռնում են Զարգա-
րին, յուղարկավորութիւնը շարժվում է.
բոլորը գնում են, Զարգարը մագերը պո-
կելով, վերան պատառոտելով, սիրտ կտրը-
տող հեծկատանքով նոյնպէս գնում է, որի
թևից բռնել են մի երկուսը. Զարգարը սուր
ճիչով). Ո՛ւր Կրգօ, իմ աղիդ Կրգօ... (Բո-
լորը յուզված, հեծեծելով, մոռալ հեռուում
են յուղարկավորութեան):

Տ Ե Ս Ի Լ 7.

ՀՐԱՅՐ ՄԻԱՅՆԱԿ.

ՀՐԱՅՐ. (Յուզված, կատաղի, բռունցքը

դէպի երկինք բարձրացնելով). երկինք փլիր, սարեր խորտակվեցէք, ժայռեր իրար բախվեցէք, գետին պատույէ՛, բայ անդունդներդ, կուլ տո՛ւր, լափիր ամեն ինչ, մի՛թէ այդ թշվառ մօր յուսահատ ճիչն էլ չի շարժում ձեզ, մի՛թէ այս տեսարանն էլ չի ցնցում, մի՛թէ դարձեալ փաստեր է պէտք... մի՛թէ դեռ արցունքը ու արիւնը չկազմեց այն ծովը, որ խղճի նավակը կարողանայ լողալ... Չէ՛, դեռ այդքան խոր չէ՛, դեռ էլի է՛ պէտք... Ա՛, տեսնում եմ ձեզ, տեսնում, կեղծավոր մարդիկ, արցունքի ծովի է՛ն ափում կանգնած հրոհրուում էք, ծաղրում թշվառութիւնը, անարգում յուսահատ ճիչը, հիանում գաղանային սխրագործութիւններով: Տեսնում եմ, բռնութիւնը ծափահարվում է... Ա՛, ես կրնկնեմ այս արեան արցունքի ծովը, կլողամ դէպի ձեզ, կամ առաջներովս ձեզ էլ բզիկ բզիկ կանեմ և դիվային ժպտով ես էլ ձեր դիերի վերայ կխնդամ, կամ ես էլ այդ արցունքների ալեաց մէջ կրեղդվեմ... Ա՛, ինչո՞ւ չկայ իմ մէջ այն ուժը, ինչո՞ւ ամենագօր չեմ, որ դեերի բուն դժոխքը, այս կեղծավոր աշխարհը փոշի դարձնեմ, ոչնչութիւն և իբր

եթեր ցրեմ արեգերքի մէջ, ինչո՞ւ... (Յուզված նստում է ժայռի բեկորի վերայ, երեսը ձեռների մէջ հեկեկում է):

Տ ե ս ի լ Տ.

ՀՐԱՅՐ, ՄՔԷ, ՍՊԱՅ ԵՒ ՄԻ ԵՐԿՈՒ ՄՔԷԻ ԸՆԿԵՐՆԵՐ.

ՄՔԷ. (Ներս է մտնում Մքէն, հետը բերելով գերի սպան. Հրայրի ուսից բաշելով). Խե՛նթ ես ինչ է չրայր, արտասո՞ւնք:

ՀՐԱՅՐ. Այո՛, Մքէ, չրայրն էլ է արտասվում, արտասունքի ծովը դեռ շատ ցանձաղ է, դեռ պէտք է լալ, դուք էլ լացեք, բոլորդ, բոլորդ: Տեսէք Սասնոյ հրպարտ սարերն էլ են լաց լինում, ժայռերն էլ են հեկեկում... Այո՛, դեռ շատ ցանձաղ է արտասունքի ծովը, շատ ցանձաղ...

ՄՔԷ. չրայր, ես քեզ չեմ հասկանում, այսօր շատ տարօրինակ ես, մի՛թէ մենք էլ գէնքերս պէտք է վայր դնենք և միայն լանք:

ՀՐԱՅՐ. Օ՛, Մքէ, տեսնէիր ինչ գարհուրելի տեսարան էր, տեսնէիր թէ ինչպէս մղկտում էր Պրգօի խելառ մայրը.

խեղճը երբ տեսավ Գրգօի կրճքի վէքըը, մի աշնապիսի ճիչ արձակեց, մի աշնապիսի աղեկաուր հեծկլտանք, որ ոչ թէ էս շրայրը, այլև այս ժայռերն էլ շարժվեցին. Օ՛, Մքէ, անտանելի է, անտանելի:

ՄՔէ. շրայր, մի՞թէ այդպիսի ճիչեր առաջի անգամն էս լսում, մի՞թէ սղավոր մօր աղեկաուր հեծկլտանքը առաջին անգամն է քո լսողութիւնը խառում. շրայր, մեր կեանքը միշտ այդ է եղել:

ՀՐԱՅՐ. Այո՛, այդ է եղել, բայց խելագար մօր յուսահատ ճիչը որդու դիւ առաջ անտանելի է... (Դառնալով սղային). Դուն էլ արդեօք կցնցվէիր գազան. ինչո՞ւ, ինչո՞ւ էք անում այս բոլորը, ինչո՞ւ ստեղծում էք այս գոխքը, ինչո՞ւ...

ՍՊԱՅ. (Լիրը ստոնում/ծեամ՞ը). Նախ հարցրէք ձեր եղբայր Սրքէին.

ՄՔէ. (Բողոնցքով հրելով). Լոխր, անպիտան:

ՍՊԱՅ. Ինչո՞ւ լւեմ, քանի որ ճշմարտութիւն եմ ասում:

ՀՐԱՅՐ. (Մ՛ռայլ, ստոն, հանգիստ). Ի՞նչ, ի՞նչ ասացիր, նախ Սրքէին հարցնել:

ՍՊԱՅ. Այո՛, շրայր, նախ եղբորիցդ

հաշիվ պահանջիր:

ՄՔէ. (Սաստելով). Լոխր թիւրք, պապանձիր լեզուդ:

ՀՐԱՅՐ. (Հանգիստ, մնայլ). Թո՛ղ, Մքէ, թո՛ղ, այժմ չեմ լայ, այժմ էլի այն լեռնորդի շրայրն եմ, այդ լուրը ինձ չի սասանեցնէ. թո՛ղ, թո՛ղ ասէ մարդը... Ասա՛ թիւրք, ասա՛, ինչ հաշիվ պահանջեմ Սրքէից:

ՍՊԱՅ. Այն հաշիվը, որ այս գիւղի կործանման պատճառը նա է, նա մեզ իմաց տվեց, նա ձեզ խաբեց հեռացրեց այստեղից, նա մեզ բերեց այստեղ:

ՀՐԱՅՐ. Բոլորովին հրան կորցրած, մըռայլ, խուլ կերպով). Լսում էս Մքէ, լսում էս... Սրքէն, իմ սիրասուն կրտսեր եղբայրը, իմ մօր արգանդից ծնված ազամարդը. (Չայնը ըստըրացնելով). շրայրի արիւն և մարմինը, մատնիչ, դավաճան: Լսում էս, Մքէ, ասա՛, ի՞նչ անեմ, ասա՛ ի՞նչ:

ՄՔէ. Ստում է այս անպիտանը, խաբում է, մի հավատար:

ՀՐԱՅՐ. Ազնիվ ընկեր, վեհանձն Մքէ, դու ինձ խնայելով, դու էս ստում. այդ փաստը արդէն պարզ է, եթէ սուտ է, բա ո՞ւր է Սրքէն, ինչո՞ւ չի երևում... ա՛, խիզ

ճը տանջում է...

ՍՊԱՅ. (Հէքնելով, դառն ժպտով). Հէ, միամիտ Հրայր, դու այդպէս կարծիր, որ նրա խիղճը տանջում է, նա քեզ պէս խենթ չէ, նա այժմ Մուշ պատիվների է սպասում և ո՞վ գիտէ, էգուց էլ նոր գօրքերի գլուխ անցած կարելի է Սասուն մտնէ:

ՄՔԷ. (Կտրելով). Տարէք այս լրբին, ինչպէս մի շուն քարով ջախջախեցէք գլուխը: Անպիտան, մինչև անգամ ծաղրում ես... (Տղերքը տանում են):

ՍՊԱՅ. (Գնալով). Մահը միևնույն է, միայն գիտացէք էգուց մէկի տեղ հարիւրը կմորթի: (Գնում է):

Տ ե ս ի Լ Գ.

ՀՐԱՅՐ ԵՒ ՄՔԷ.

ՀՐԱՅՐ. (Սառն, սփրանած). Իրավունք ունէ, մի նեղանայ Մքէ, նա մեղավոր չէ, որ իմ եղբայրը մատնիչ է: Մքէ, այլևս ես անպէտք եմ, իմ պատիվը արատավորված է, ցեխն է մացրած: Այլևս այն խոժոռ, հպարտ Հրայրը չկայ, այլ մի ամօթահար,

անպատիվ, սնքոր մարդ եմ: Շարունակիր մեր գործը, սրբիր թշվառի արցունքը, հանգցրու խեղճի հրդէյված տունը, մխիթարիր յուսահատ ծերուկին, հաց տուր մղկտացող անօթի որբին. (Չայնը ըստծրացնելով). շանթիր գազանին, կեղեքողին, վատին, բռնակալին (մ'նղմ') և յիշիր Հրայրին... Մնաս բարե... (Չեռը տանում է դանակին, Մքէն իսկոյն ձեռից ընծում է):

ՄՔԷ. (Աղաչակամ). Հրայր, Հրայր, ի՞նչ ես անում, ի սէր սուրբ գործի, յեա կանգնիր այդ քայլից:

ՀՐԱՅՐ. Յեա կանգնեմ, իսկ իմ պատիվը, իմ անվան արատը ինչո՞վ սրբեմ:

ՄՔԷ. Հերոսութեամբ և ոչ թէ թուլամորթի մահով:

ՀՐԱՅՐ. (Չեռը ազատելով). Այո՛, ճիշտ, շատ ճիշտ ես ասում՝ հերոսութեամբ: Մքէ՛, Մքէ՛, ինձ չթողիր, որ ինքնասպանութիւն գործեմ, բայց մղեցիր զէպի եղբայրասպանութիւն: Լսով, թող լինի այդպէս. (կատաղի). Այժմ միայն Սրքէի, միայն իմ հարազատ եղբօր արիւնը կլվայ իմ անվան կեղտը, կփրկէ իմ պատիվը: (Յասկոտ դուրս է գնում, գնում է նւ Մքէն):

Վ Ա Ր Ա Վ Ո Յ Ր

Վերջ երրորդ գործողութեան

ՉՈՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Տեսարանը ներկայացնում է Սասնոյ լեռները, թիք թիք ժայռեր, մացառոտ բերձեր, ահաւիտ անդունդներ, լեռների կատարները մշուշապատ, բեմի խորքում, առաջի շարքում լեռան ժայռոտ տափարակ: Վարագոյրը դեռ չբացված հեռվից լսվում է թնդանոթների որոտ, հրացանների ճարձատուն և ինչ որ խուլ, խառնաշփոթ իրարանցում: Վարագոյրը բացվելուց յետոյ շարունակվում է նոյնը, բեմի խորքում, սարերի կրճբին երևում են գիւղացի կանայք, երեխաներ, ծերունիներ, սրտնք որը երեխան շալակած, որը երեխայի ձեռից բռնած, որը դանազան կապոցներ ձեռին, շալակին, շտապ փախչում են լեռն իվեր և անյայտանում բեմի յետևում: Շփոթը ավելանում է, բեմ են գալիս մոլոր, շվար մի ալէզարդ ծերունի, բռնած երկու շտաբորիկ, գլխաբաց երեխաների ձեռից, նրա յետևից մի կին փոքրիկ մանկիկը շալակին, միւսը գրկին, նոյնպէս ուզում են բարձրանալ լեռն ի վեր):

Տ Ա Ս Ի Լ 1.

ԾԵՐՈՒՆԻՆ, ՀԱՐՍԸ ԵՒ ԵՐԵՍԱՆԵՐ.

ԾԵՐՈՒՆԻ. (Գողգոթ, կերկեր քայլերը ուզում է գէպի ժայռոտ գայտիվայ-

բը, նստում է հանգչելու քրտինքը սրբելով, աչքերը գէպի երկինք). Օ, քիչ հանգչեմ, չեմ կարող, ոտներս դողում են... Աստված, այս ինչ կրակ է, գոնե՞սյ ինայիբ այս փոքրիկ, մատղաշ երեխաներին, սրանք ինչո՞վ են մեղավոր, Աստված, այս ինչ սև օր է...

ՀԱՐՍԸ. (Համբուրելով գրկի փոքրիկին). Քնիր սիրունիկս, քնիր, ո՞վ գիտէ ինչ կլինի քիչ յետոյ, խեղճ... (Գոգնոցի ծայրով աչքերն է սրբում):

ԵՐԵՍԱՆԵՐԻՑ ՄԷԿԸ. (Ծերունիին). Պապի, ուր ենք գնում, պապի վախենում եմ: ԾԵՐՈՒԿ. Սուս տղաս, բան չկայ, մի վախիր...

II ԵՐԵՍԱՅ. Պապի անօթի եմ, պապի ծարավի եմ...

ԾԵՐՈՒԿ. (Ձեռներով աչքերը սրբելով). Բալէքս, քիչ էլ սպասեցէք, ահա մօտ է Անդորը... Օ, սա ինչ պատիժ է... խեղճ, անկեզու երեխաներ...

ՀԱՐՍԸ. (Հեղեկալով). Ի՞նչ անէ, ի՞նչ ձիւն տայ գլխին պապէն... Դր շուրը ընկնէ...

ԾԵՐՈՒԿ. Մի լար Շուշան, մի լար... (Տնքալով վեր է կենում և ըստում թողնու-

ըն ձևով զորոզող). Գնանք քանի ժամանակ
կայ... (Լեռնիվեր են բարձրանում և կոր-
չում ժայռերի յետևը. բեմի մօտ, ցածրիկ
թումբի ժայռերում երևում են Հրայրը և
Մքէն. Մքէն հեռագիտակով գիտում է հե-
ռուն):

Տ ե ս ի լ 2.

ՀՐԱՅՐ ԵՒ ՄՔԷ.

ՀՐԱՅՐ. (Մքէի հետ քիչ առաջ գալով,
Մքէն դարձեալ գիտում է). Ժողովուրդը
արդէն սպանով տեղ է, տղերքը նրանց կը
պաշտպանեն, բայց խեղճ մարդիկ, գիւղը
բողոքովին ավերակ դարձավ, քսան թնդա-
նօթ իրենց մահառիթ բերանները դարձրել
են դէպի այդ քամբախտ գիւղը:

ՄՔԷ. (Դիտել դադարեցնելով). Նոր
գորքեր են գալիս, երևի Անդոքը պաշարե-
լու միտք ունեն, արդեօք այդ անպիտան-
ները մարդիկ են, միթէ խղճի կտոր էլ չը
կայ, մի ողորմելի գիւղի, մի խեղճ, անզէն
ժողովրդի վերայ տաանեակ հազարներով են
զրոհ տալիս... (Նայելով). Սա ինչ բան է,

թիւրքերը սեղմվեցան, պաշտպանվում են,
բայց ում դէմ...

ՀՐԱՅՐ. Չլինի մեր տղերքը Անդոքը
թողին և այդ յանդուգն քայլն արին:

ՄՔԷ. Ո՛չ, տղերքը միայն այս կողմից
կարող են գնալ, Անդոքի միւս կողմից շատ
դժվար է և վտանգավոր... Տես, տես, փախ-
չում են թիւրքերը: Սա ի՞նչ է, տէր Աստ-
ված:

ՀՐԱՅՐ. Չարմանք է, չլինի թակարդ
են լարում անպիտանները, որպէսզի մեզ
խափեն:

ՄՔԷ. Շատ կարելի է, պէտք է զգոյշ
լինել:

ՀՐԱՅՐ. Թնդանօթներն էլ յետ քաշե-
ցին, սա ինչ բան է, բայց հետաքրքիր է,
թէ յարձակումը որ կողմից է:

ՄՔԷ. Դեռ ոչինչ չի կարելի որոշել,
քիչ սպասենք, յայտնի կլինի:

ՀՐԱՅՐ. (Առնելով գիտակը և խորա-
գինի դիտելով). Տես, տես Մքէ, թիւրքերի
զիրքի գիմացի ժայռերից հրացանների ծուխ
է երևում: Տես, տես, որտաի հետ ծուխն
էլ շատացավ... Դա թակարդ չէ, դրանք
մեզ դաշնակից են... Բայց ո՞վքեր պէտք է

լինեն, չլինի երկնքից իջան մեզ օգնելու համար:

ՄԲԷ. (ժպտալով). Հրաշքների դարը անցել է, բայց ուղիղ որ ուրիշ ոչ մի կողմից չէին կարող գալ մեզ օգնականներ. բոլոր ճանապարհները բռնված են թիւրք զորքերով:

ՀՐԱՅՐ. Ահա և նրանք դուրս եկան ժայռերից, գրոհ ավին դէպի թիւրքերը. օ հերոսներ: Շնուա, շնուա, պէտք է օգնել: (Երկար, սուր շվացնում է, սարերից նոյն կերպ պատասխանում են: Հրայրը թափահարում է կարմիր թաշկինակը, խոյն ամեն կողմից, ժայռերի տակից, սարերի գագաթից, հրացանները ձեռներին ընկերները վազում են դէպի Հրայրը և Մքէն):

ՀՐԱՅՐ. Տղերք, Աստված մեզ ընկերներ է ուղարկել, ներքեում նրանք մահուկեանքի կռիվ են մղում, չպէտք է յապաղել, յառաջ: (Հրացանը պատրաստ ձեռում, մերկացրած սուրը ասամներում բռնած, շտապ իջնում են դէպի հովիտը Հրայրը և ընկերները: Բեւձր մի առժամանակ մնում է դատարկ: Լավում է թնդանօթի որոտ, հրացանների ճարձատուն և ինչ որ խուլ շփոթ):

Տ Ա Ս Ի Լ Յ.

ՀՐԱՅՐ, ՄԱԹՈՍ ԵՒ ՄԻ ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ

ՀՐԱՅՐ. (Վերափոր, որին բռնել են երկու ընկերները, կրծքին երկուս է արխնոտ վիրակապ. նստում է մի ժայռի բեկորի վերայ). Տղերք, այստեղ սպասենք կովի վախճանին, ա՛, փառավոր կռիվ էր, ինչպէս փախչում էին անպիտանները: Ո՞վ էր այն հուժկու աղամարդը, կովի մէջ շատ որոնեցի, մօտիկից չկարողացայ տեսնել. ա՛, հերոս էր, հերոս...

ՄԱԹՈՍ. Այն, փառավոր կռիվ էր, բայց ափսոս, որ դուք վերափոր էք:

ՀՐԱՅՐ. Է՛, թող ոչնչանան տասնեակ ինձ պէսներ, բայց միայն ունենանք այգպիսի մի յաղթութիւն: Հրաշալի կռիվ էր, հրաշալի. երկու երեք հարիւր մարդ, նրանց դէմ տասը հազար զինվոր և տասը թնդանօթ, մէկի դէմ յիսուն... Օ՛, թող լավ տեսնեն մեր դահիճները... (Թուլացած). Մաթոս, մի ջուր տուր, ծարավի եմ:

ՄԱԹՈՍ. Ոչ հրայր, լավ չէ վերափո-

բին ջուր խմելը վտանգավոր է:

ՀՐԱՅՐ. (Տխուր ժպտով). Ջուրը ինձ ոչինչ չի անի, սուր ինձ, է սիրելիս, իմ ժամը դուրս է եկել, երկու մահացու վերջ ունեմ. . Միայն իմ խնդիրս է Աստվածանից այնքան ապրեմ, որ գրկեմ այսօրվայ անձանօթ հերոսին, այդ հուժկու աղամարդին և նրա թևերի մէջ մեռնեմ: Օ, ինչպէս քաջ էր, ինչպէս յանդուզն, կարծես առիւծ էր... Ո՞ւր է, ո՞ւր, մի տասը այգպիսի հերոս, քարուքանդ կանենք ամբողջ աշխարհը... (Թոյլ). Բայց ափսոս, ես մեռնում եմ...

ՄԱԹՈՍ. Մի ասիր չրայր, այնքան էլ վտանգավոր չեն վերքերդ:

ՀՐԱՅՐ. Մաթոս, ես լավ գիտեմ, թէ որ վերքը վտանգավոր է. ես շատ շատ մի երկու ժամ կապրեմ, ոչ ավել... Ա՛, արդեօք պիտ տեսնեմ այսօրվայ հերոսին, գոնեայ միսիթարված կթողնեմ այս աշխարհը:

ՄԱԹՈՍ. Չրայր, մի ասիր, դեռ մեզ շատ ես պէտք, ապրէ, դեռ երկար ապրէ:

ՀՐԱՅՐ. Տեսնենք, ո՞ւր է, Աստված բերանիցդ լսէ, ինձ համար կեանքս ոչինչ, բայց դեռ նպատակներ ունեմ իրագործելու:

(Կասկածոտ գլուխը թափահարելով). Բայց... շատ դժվար է, շատ, դուրթիւնս անյոյս է:

ՄԱԹՈՍ. Փառք Աստուծոյ, խօսում ես լավ, հայեացքդ մաքուր, ես վտանգավոր ոչինչ չեմ տեսնում:

ՀՐԱՅՐ. (Մեղմ ժպտով, թոյլ). Այո, հայեացքս մաքուր է, խօսում եմ առողջնութեամբ, որովհետև վերքս նոր է: (Մատով ցոյց տալով սիրտը). Բայց սիրտս, սիրտս վառվում է... (Առողանտլծեսամբ. է՛, ոչինչ, չրայրը կմեռնի, նրա տեղ կկանգնի նորը, այսօրվայ հերոսը... Ո՞վ է արդեօք այդ անձանօթ աղամարդը. ա՛, ինչպէս էր կռվում, ինչպէս էր մանում ամենավտանգավոր տեղերը և կարծես անխոցելի էր, ամեն տեղ մահ սփռելով, ինքը անվտանգ թռչում էր մի երկրորդ տեղ... Զարմանք, զարմանք, նրա քաջութիւնը և յանդուժութիւնը անպատմելի է... Ո՞ւր է, արդեօք պիտ կարողանամ գրկել, սեղմել կրծքիս այդ գերբնական, պաշտելի մարդուն... (Լսվում է խօսակցութեան ձայներ, ուրախ ուրախ ներս են լցվում Մքէն եւ մի քանի ընկերները գոչելով «Տաղթուծիւն, յաղթութիւն»...):

Տ Ե Ա Ի Լ 4.

ՆՈՅՆՔ, ՄՔԷ ԵՒ ՄԻ ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ.

ՄՔԷ. (Մօտենալով Հրայրին). Հրայր, հոգիս, ինչպէս ես, վերքդ խօ վառնդավոր չէ, ինչո՞ւ այստեղ մնացիր, գնայինք մօտակայ գիւղը և այնտեղ վերակապը փոխէինք:

ՀՐԱՅՐ. Ոչինչ Մքէ, ես շատ լավ եմ, հոգով լավ... Յաղթութիւն, յաղթութիւն էք գոչում, բայց ո՞ւր է այդ յաղթութեան հերոսը, ո՞ւր է այն կորովի մարդը:

ՄՔԷ. Կգայ, նա էլ կգայ, մենք առաջ անցանք ավետելու քեզ, որ թշնամին բուրրովին շարգված, թնդանօթ, գրօշակ թողած փախավ այս լեռներից... Յաղթութիւն, շատ մեծ յաղթութիւն:

ՀՐԱՅՐ. (Ուրախ, դժգոյն ժպտով). Ա, հրճվիր սիրտ իմ, ի՞նչ արժէ մի Հրայր այսպիսի մի փառավոր յաղթութեան առաջ... Ո՞վ է, ո՞վ է հերոսը:

ՄՔԷ. Ասոն ժամանակ ո՞վ կարող էր աննեղ թէ ով է: Երբ թշնամին փշրված բոլորովին փախուստ տվեց, մենք ամեն

կողմից սկսեցինք հալաքվել, անսայ նա էլ իր մարդկանցով դէպի մեզ է գալիս: Ես շտապեցի դէպի քեզ, աննեղութե թէ ինչպէս է քո գրութիւնը, իսկ ընկերներիցս մէկին ուղարկեցի նրանց բերելու մեզ մօտ: Դու այն ասա, ինչպէս ես գգում, վերքդ խօ չի նեղացնում:

ՀՐԱՅՐ. Մքէ, Մքէ, Հրայրը լավ է, անչափ ուրախ, վերքս, է, դատարկ բան, թէև մի ժամ, երկու ժամ կեանք ունեմ, բայց դրանք երջանիկ ժամեր են ինձ համար:

ՄՔԷ. (Զարհուրած). Ի՞նչ, մի ասիլը Հրայր, առանց քեզ սուգ կպատէ Սասուն:

ՀՐԱՅՐ. Ո՛չ, ո՛չ, նոր արև է ծագում Սասունին, ա՛ն, ո՞րքան ուրախ եմ, որ թէև ես կմեռնեմ, բայց ինձ կը յաջորդէ ավելի արժանավորը... Մքէ, սա՛ն, ամո՛ւր, երկնթ մարդ, դուն էլ ուրախացիր, կունենաս քեզ արժանի ընկեր... Ա, ինչո՞ւ է ուշանում, մի՞թէ բաղձանքս չկատարված, չգրկած այդ նախանձելի մարդուն, պիտի փակեմ տենչալի աչերս...

ՄՔԷ. Հրայր, ի սէր Սասունոյ, մըտքիցդ այդպիսի բաներ մի անցկացնիր, ապրէ դո՛ւ, ապրէ. Մքէն ոչինչ է առանց Հրայրի:

ՀՐԱՅՐ. Մքէն գործի արմատն է, Մքէն շէնքի հիմն է, Մքէն իրար կապող, ի մի գանգող խմորն է, առանց Մքէի ոչինչ է գործը: Հրայրը գործի բունն է, շէնքի պահպանող կտուրը, գանգվածի գորեղ նիւթը, որի տեղ կարող է բռնել մի ուրիշը... Դու չես երևում, դու չես փայլում, բայց դու ապրէ, երկար ապրէ, առանց քեզ, առանց արմատի, առանց հիմքի մեր գործը երերուն է. իսկ եթէ մեռավ Հրայրը, նրա տեղը կկանգնէ այսօրվայ հերոսը, այդ հուժկու տղամարդը... Փառք ու պատիվ քեզ, ով քաջ, արի հոգիս, արի սիրելիս, ուժերս ինձ թողնում են, արի, թող քեզ գրկէ Հրայրը և քո թևերի մէջ ավանդէ իր հողին: Լավում է ձայներ, իրարանցում):

ՄԱԹՈՍ. (Ծայելով հեռու). Նրանք են, նրանք, եկան:

ՀՐԱՅՐ. Նրանք են... (Ուզում է վեր կենալ, դողդողում է. Մքէն օգնում է, Հրայրը կանգնում է դժգոյն ժպիտը երեսին). Կանգնած ընդունեմ, փարվեմ յաղթողին ու այնպէս մեռնեմ...

Տ և ս ի լ 5.

ՆՈՅՆՔ, ՍՐՔԷ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐ.

(Ներս են մտնում Սրքէն և ընկերները. մի երկուսը առաջից քաշում են մի խլած լեռնային թնդանօթ, որը բերում են բեմ: Սրքէն և մի երկուսն էլ ձեռներին բռնած թշնամուց խլած գրօշակները հետևում են նրանց իրենց միևս ընկերներով, բոլորը զինված են: Երբ ներս են մտնում, իսկոյն խլած գրօշակները փռում են Հրայրի առաջ):

ՍՐՔԷ. (Ուզում է փարվել). Հրայր, անառակ եղբայրդ վերջապէս կարող է քեզ գրկել:

ԲՈՒՈՐԸ. (Չարմացած). Սրքէն...

ՀՐԱՅՐ. (Շփոթված, կռքոտ յետ հընլով). Հեռու, հեռու ինձանից մատնիչ... Եթէ դու մինչև անգամ աշխարհը հիմքից շարժես, բայց դարձեալ Հրայրի թևերին արժան չես... (Ցասկոտ). Յեա դարձրէք թշնամուց խլված գրօշները, յետ ավէք թընդանօթը, շարժէ, որովհետև այս յաղթութեան հերոսը, (կատաղի) մի զգվելի, մի կեղանտ, ստոր, քսամելի ճիվաղ է... Սրքէ,

միթէ այնքան քո մէջ ամօթը կորած է, որ
դեռ ապրում ես... Օ՛, լավ էր, որ մինչև քո
այստեղ գալը ես մեռած լինէի...

ՄԲԳԷ. (Տխուր, մտածոյր). Հրայր...

ՀԲԱՅՐ. Ոչ մի խօսք, ամօթ, ամօթ
քեզ... Ամօթ, որ այդքան քաջ լինելով հան-
դերձ, կեղտոտ ես... Այն, քո այսօրվայ
սիրագործութիւնները անպատմելի է, աշ-
խարհը կգարմանայ, կփառավորվի քո անու-
նը, պատմութիւնը կը յիշատակէ դարէդար.
բայց Հրայրի համար այդ բոլորը ոչինչ...

ՄԲԳԷ. Հրայր, ասան, ասան, ինչ անեմ,
որ քո ներման արժանանամ. հրամայիր
կրակը մանել, լողալով ծովը անցնել, գէպի
երկինք թռչել, ասան, հրամայիր, ես պատ-
րաստ եմ, միայն թէ ինձ ներիր:

ՀԲԱՅՐ. (Սառն, խորխա). Ի՞նչ անես...
Հանիր գերեզմանից և կեանք տուր Գրգօին,
Գիւլիգարին. վերագարձուր խեղճ Զարգարի
բանականութիւնը. իրենց հասցրու որը այ-
րիների կորուստը, այն ժամանակ վերկած
կլինես քո պատիվը, այն ժամանակ կարելի
է Հրայրը քեզ գրկէ...

ՄԲԳԷ. (Յուզված շոքելով և կարծրջ
քանալով). Սպանիր, մեռցրու, իբր որդուք

արտախր սոսներիդ տակը, միայն բարոյապէս
մի տանջիր...

ՀԲԱՅՐ. (Յուզված). Ա՛, ես ուխտել էի,
երգվել... բայց... ճ, տէր Աստված... (Սրբէի
թնից բռնելով և վերկացնելով, մեղմ).
Վեր կաց, կանգնիր... ես մի քանի բոպէ
ուսնեմ ապրելու, շատ շատ մի ժամ... Մի
ինգիրք ունիմ Սրբէ:

ՄԲԳԷ. (Արագութեամբ). Ասան, հրա-
մայիր:

ՀԲԱՅՐ. (Ժանրութեամբ). Ավելի կար-
ճացրու այդ ժամանակը, խիբ և այդ կեն-
սալի բոպէները. այդ գանակդ, որ հանգ-
չում է գօտուդ մէջ, խրիբ կուճքս...

ՄԲԳԷ. (Մի երկու վայրկեան կանգ
առնելով, մտածկոտ). Հասկանում եմ... (Ա-
րագութեամբ հանելով ատրճանակը և պար-
պելով իր կրծքին). Այժմ մաքուր է պա-
տիվս .. (Ընկնում է Հրայրի թների մէջ և
մեռնում):

ՀԲԱՅՐ. (Հագիւ հազ ոտի վրայ մնալով,
թների մէջ պահում է Սրբէին. Մքէն ըրո-
նում է Հրայրին). Ա՛, իսկապէս հերոս ես,
ժանգոտ էր յիշատակդ, ազտեղ էր
անունդ, դա էլ արիւնովդ սրբեցիր...

Մքէ, Մքէ, բոնիր, գրկիր այս նահատակին էլ, դժոխային կեանքի արգասիք այս զօհին էլ: (Հրայրի ձեռնոց Սրբէին առնում են մի երկու տղայք եւ դնում կանաչների մէջ. Հրայրը չորերով առաջը եւ համբուրելով Սրբէին). Այժմ, միայն կհամբուրեմ այդ դժգոյն ճակատդ, որը մի ժամ առաջ մարտընչում էր հազարավոր զինվորների դէմ... (Համբուրում է). Օ՛, միթէ չլցվեց արցունքի ծովը, միթէ մարդիկ չը յագեցան մեր արիւնտով, դարձեալ է՞ պէտք... Եթէ դարձեալ է պէտք, թող էլի լայ թշվառ, անտերունչ ծերուկը, թող մազերը փետելով հեծհեծէ խելակորոյս մայրը, թող հեկհեկայ անբախտ, պսակը կորցրած նոր հարսը, թող ողբայ բռնաբարված կոյսը, թող նժայ արիւնաքամ, վիրավոր հայ տղամարդը, թող մղկտայ անօթի որբիկը, թող ծվայ մերկութիւնից սոսոսացող երեխան, թող լարխընդած ճշով աշխարհ սարսեցնէ մայրը կորցրած օրօրոցի մանկիկը... Մենք էլ լանք, հեծհեծենք, ողբանք, կարելի է մարդկանց դուժը շարժենք, կարելի է միայն այն ժամանակ սպասել, որ այդ արտասուենքի ծովով դէպի այս կողմը նավարկէ մարդկային

խիղճը... (Բանդելով վերահապերը). Եւ հոսէ՞ դու հեղուկ, ինձ այլևս պէտք չէ կեանք, հոսէ, որ լցվի անգթութեան վիհը, որ դունեայ արիւնտով խեղդենք այն, ինչու դէմ որ մարդս անգոր է կովելու... (Ատամները կըմտացնելով, ըսունցքը սեղմած). Օ՛, թոյլ եմ, անգօր, թէ չէ կավերէի, կը քանդէի, քամուն կաայի միջև անգամ դժոխքը... (Թուլացած, յետեւից բռնում է Մքէին). Մքէ, Մքէ, մեռնում եմ... Օ՛, ինչո՞ւ մարդիկ այդքան անխիղճ են... Մքէ, սիրելի Մքէ, կտակում եմ քեզ... մեր սուրբ գործը... Տղերք... Հրայրը մեռնում է... ապրեցէք դուք եւ վրէժխնդիր եղէք...

(Հրայրը մեռնում է, Մքէն համբուրելով ճակատը դնում է գետին, բոլորը տխուր, տրտում շրջապատում են Հրայրին և Մքէին):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր


Տեսարանը նոյնը, ինչ որ չորրորդ
գործողութեան ժամանակ, միայն բնութիւ-
նը ավելի տխուր, մշուշը ավելի խիտ: Բեմի
մէջ տեղը մամուռ ժայռերի բեկորներից
կազմված սեղանի վերայ դրված է ծաղիկ-
ներով ծածկված Հրայրի և Սրբէի գին, ու-
րոնց ոտների կողմը թէք, խաչկապ փռված
են թիւրքերից խլված դրօշները: Սեղանի
երկու կողմը, ոտների տակ կապէ խնկա-
մանների մէջ ծխում է խունկ և կնդրուկ.
աջ կողմը չոքած, գլուխը ձեռների մէջ ող-
բում է սրբոց վերայ Հրայրի մայրը. նրա
մօտ կանգնած է հերարձակ, խռիվ մագե-
րով, անկարգ շորերով խելախորոյս Զարգա-
րը, մի ձեռով բռնած Մարջանին: Զորս
կողմերը պատել են ծերեր, սրբեր, այրի-
ներ, որոնք դժգոյն, պատառոտուն շորերով
հեկհեկում են: Մի քանի պատառոտուն շո-
րերով երեխաներ, գլխաբաց ոտաբոբիկ
Հրայրի և Սրբէի վերայ վարդ ու ծաղիկ
են սփռում: Մքէն իր ընկերներով, գին-
ված, տխուր, տրտում, ձեռները ծնօտին,
կանգնած են բեմի առաջ մի կողմը. դէպի
աջ: Նախքան վարագոյրը բացվելը լսվում
է մեղմ սրնգի հաստ ձայնով մի սրտառուչ
մեղեդի: Վարագոյրը բացվելուց յետոյ նը-
վազը շարունակվում է, կէս բուլեից յետոյ
վարագոյրը իջնում է:



ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

Գրվել է Առաքալակի Երզնկայի Սահարոյան

«Ազգային գրադարան»



NL0355885

47098